Իշխող ուժի հրապարակված ծրագրում այսպիսի ձեւակերպումներով դրույթները հենց վկայում են այն մասին, որ քաղաքական իշխանությունն ինքն է «բարենորոգման» անվան տակ նախաձեռնել Հայ եկեղեցին իշխանությանը հնազանդեցնելու եւ վերահսկողության տակ վերցնելու առաքելություն, ինչը ոչ մի պարագայում հաջողություն չի գրանցի:

Կարդացեք՝ էջ 4

Նիկոլի վերընտրվելու դեպքում ունենալու ենք ՀՀ սուվերեն տարածքների կորուստ, մեզ պարտադրվելու է 300 հազար ազերի փախստականների վերադարձ, անկլավների հանձնում, «Արեւմտյան Ադրբեջան», եւ այդպես շարունակ: Արցախը կորցնելուց հետո մեր ժողովուրդը պատրաստ է նման զիջումների՝ այս մի թիզ մնացած հողակտորից:

Կարդացեք՝ էջ 6

Եղբայր, մեզ շան տեղ չեն դնում քո հիմար քարտեզի, քո վարած քաղաքականության, քո ապազգայնության, վերջապես՝ քո անձի պատճառով: Գնա, էլ մի սպասիր ընտրություններին: Քո պատճառով ՀՀ քաղաքացին կանգնած է սեփական իշխանությունը ձեւավորելու դժվարության առաջ՝ կամ պիտի Արեւմուտքի սիրեցյալին ընտրի, կամ Պուտինի:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 56 (4191), 8 ապրիլ, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

Անցած ամռանը «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գրիգոր Իսկանդարյանը դատարան էր դիմել եւ հաղթել քաղաքապետ Տիգրան Ավինյանի հորը՝ Արմեն Ավինյանին: Հիշեցնենք, որ Ավինյանի հայրը «համբալ» էր անվանել «Օպել» վարողներին, եւ ավագանու անդամ Իսկանդարյանը դիմել էր դատարան: Նրա հայցը դատարանը բավարարել էր մասնակիորեն՝ 500 հազար դրամի փոխհատուցման պահանջից 250 հազարն էր բավարարել: Ապա Ավինյանի հայրն առաջին ատյանի որոշումը բողոքարկել էր վերաքննիչ քաղաքացիական դատարան: «Հրապարակ»-ի տեղեկություններով՝ ամիսներ տեւած դատաքննությունից հետո, օրեր առաջ վերաքննիչը՝ դատավոր Նարեկ Գաբրիելյանի նախագահությամբ, ամբողջությամբ բավարարել է քաղաքապետի հոր բողոքը: Վճիռն ամբողջությամբ բեկանել է եւ ամբողջությամբ մերժել Գրիգոր Իսկանդարյանի հայցն ընդդեմ Արմեն Ավինյանի: Ստացվում է, որ «կարմիր գծերի գումարը պիտի 500 հազար սարքեն, որ ամեն համբալ չգա կայնի ստեղ՝ իրա գեղի Opel-ով» արտահայտությունը վերաքննիչ դատարանը խրախուսում է եւ գտնում, որ այստեղ որեւէ վիրավորական արտահայտություն չկա: Սա առաջին դեպքը չէ, որ առաջին ատյանի դատարանի որոշումները վերադաս դատարանները բեկանում են՝ հօգուտ իշխանությունների:

Ստեր տեղեկություններով, օրեր առաջ կալանքից ազատվել է քրեական աշխարհում հայտնի «օրենքով գող» Գեւորգ Մելիքյանը՝ Օշականցի Գեւորիկը: Դատարանը նրա նկատմամբ նոր խափանման միջոց է կիրառել՝ տնային կալանքը, համակցված բացակայելու արգելքով եւ 13 միլիոն դրամ գրավով: Քրեական գործով անցնում են Օշականցի Գեւորիկը եւ մեկ այլ օրենքով գող՝ Սամվել Հասանյանը՝ «Մանգո» մականվամբ: Քրգործն այն մասին է, որ նշված անձինք, լինելով «օրենքով գողեր», օգտագործել են իրենց անունն ու կապերը՝ գումարի դիմաց կենցաղային հարցեր լուծելու համար: Ի դեպ, տեղեկացանք նաեւ, որ Արագածոտնի մարզի դատարանն այս եւ ամիսներ առաջ նախաձեռնված քրեական վարույթը, որով Մելիքյանին մեղադրանք է առաջադրվել Օշականում գտնվող իր տան բակում թմրանյութ աճեցնելու համար, միացրել է իրար եւ ընդդատության կարգով ուղարկել Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Դատարանը գտել է՝ քանի որ նույն վարույթով անցնող Մանգոն վանաձորցի է, գործը պետք է քննվի այնտեղ: Գլխավոր դատախազությունից մեզ փոխանցեցին, որ խափանման միջոցը փոխելու դատարանի որոշումը բողոքարկելու են վերաքննիչ դատարան:

Էս ինչ ծնունդ ես

Գալիս ես իշխանության, մեծ-մեծ հոխորտում, թե՝ իմ զրոյական կետից եմ բանակցում, ինչ ուզում եմ, էն էլ բանակցում եմ, չհամարձակվեք ինձ տենց ապուշ հարցեր տալ: Հետո սկսում ես նվաստացնել ռազմավարական գործընկերոջդ ու դուխով տղա խաղալ: Սադրիչ հայտարարություններ ես անում ու շաբաթը մեկ Արցախ մեկնում, նկարվում տատ ու պապի արձանի մոտ, քոչարի պարում, հայտնի արտահայտությունը բղավում Ստեփանակերտի միտինգում: Մի հատ էլ պուճուր ռազմական գործողություն է տեղի ունենում Տավուշում, դա դարձնում ես ահեղ ճակատամարտ ու հերոսի, գեներալի կոչումներ շնորհում այդ գործողության մասնակիցներին, մինչեւ գալիս հասնում ես 2020 թ. սեպտեմբերի 27-ը: Մինչ այդ բոլոր առաջարկները՝ խաղաղ կարգավորման եւ Արցախի համար շահեկան, արդեն մերժել ես, ասել են՝ էդ հիմար ՍՈՒ ինքնաթիռները մի առ՝ առել ես, բանակը ելակով ապահովել ես, ոչ մի բառ չես ասել, որ սպառազինության պակաս ունենք, եւ ոչինչ չես արել, որ զենքի պակասը լրացնես: Պարտվել ենք, կորցրել ենք, սոսկալի զոհեր ենք ունեցել, կոտրվել ենք, կապիտուլացվել ենք: Փոխանակ սկսեինք ոտքի կանգնել՝ գահավիժումը շարունակվել է: Մի քանի ամիսը մեկ կորուստ ու նահանջ, թշնամու պահանջների կատարում, ստորացուցիչ սահմանազատում: Միայն մի բանում ես հաջողել՝ իշխանությունը կարողացել ես ամուր պահել, անգամ Արցախի հայաթափումից հետո: Ո՛չ խղճի խայթ, ո՛չ ափսոսանք, ո՛չ մեղքի ու ամոթի զգացում, ո՛չ կարեկցանք տնազուրկ հայրենակիցներիդ նկատմամբ: Հակառակը՝ շարունակ թիրախավորել ես հայրենիք կորցրած մարդկանց եւ քո կողմնակիցներին մղել, որ բոլոր այլախոհներին թիրախավորեն, թույլ չտան ուշքի գալ, մեջքն ուղղել: Բոլորին ներշնչել ես, որ եթե անգամ Հայաստանի կեսը կորցնենք, մնալու եմ իշխանության, հաշտվեք էդ մտքի հետ:

Վլադիմիր Պուտին-Նիկոլ Փաշինյան ապրիլմեկյան հանդիպումից եւ կոշտ զրույցից հետո, մեր տեղեկություններով, էլ ավելի կոշտ զրույց է ընթացել փակ դռների ետեւում: Պաշտոնական Մոսկվան, ըստ մեզ հասած լուրերի, հասկացել է, որ Նիկոլ Փաշինյանի հետ որեւէ պայմանավորվածության հանգել հնարավոր չէ, եւ անցել է գործնական քայլերի: Մասնավորապես, Կրեմլում որոշում են կայացրել արգելել փաշինյանական իշխանության հետ փոխկապակցված բոլոր բիզնեսների, ընկերությունների, անգամ մշակութային կազմակերպությունների մուտքը Ռուսաստան: Երեկ խոսում էին, որ դադարեցվել է Պռոշյանի կոնյակի գործարանի լիցենզիան, որով Ռուսաստան ալկոհոլային խմիչքներ էին արտահանում: Անգամ ռուսների հետ բավականին ջերմ հարաբերություններ հաստատած Գուրգեն Արսենյանն ու նրա շրջապատն են հայտնվել «պերսոնա նոն գրատա» կարգավիճակում:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄ ԱԺ-ՈՒՄ

Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում երեկ կատարված փոփոխությունների նախագծի քննարկման ժամանակ ՔՊ-ականները, գրեթե առանց բացառության, ԱԺ ամբիոնին էին մոտենում «շպառգալկաներով» եւ թղթից էին կարդում իրենց ելույթները: Մեր տեղեկություններով, ՔՊ-ական պատգամավորներին նախապես գրել տվել են իրենց տեքստերը, դերաբաշխում են արել, թե ով ինչ ելույթ պետք է ունենա, շատերը չեն հասցրել անգիր սերտել ելույթները կամ իրենց բառերով վերաշարադրել միտքը եւ որոշել են, որ ավելի ապահով է կարդալը: 66 ձայն էր հարկավոր՝ նախագիծն անցկացնելու համար, եւ 2 անգամ ընդմիջում վերցրին, որ կոճակ սեղմողներին բերման ենթարկեն: ՔՊ-ական 65 պատգամավորներից բացի, կողմ քվեարկեց նաեւ երբեմնի ընդդիմադիր Գեղամ Նազարյանը, որի քվեարկությունից որպեսզի առաջ մոտեցավ ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը եւ, հավանաբար, հրահանգավորեց: ՔՊ-ում թերեւս մտավախություն ունեին, որ թիմում կարող են «տակից» դավաճանել իրենց՝ հաջորդ խորհրդարանից դուրս մնացողները, եւ չքվեարկել կողմ, ուստի ՔՊ-ի ռեզերվային խաղացողին էին ներգրավել:

ԸՆՏՐՈՂԸ ՊԻՏԻ ԳԻՏԱԿՑԻ, ՈՐ ԻՐ ՁԱՅՆԸ ՈՉ ԹԵ ԱՆՁԻ, ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ Է

*Մեր զրուցակիցը ՀԱԿ վարչության անդամ, քաղաքագետ **Տաթեւ Զորյանն** է:*

- Ապրիլի 6-ին ՀԱԿ-ը հայտարարեց, որ, չնայած գործադրված ջանքերին, «Ուժեղ Հայաստանի» հետ դաշինքը չի կայացել, ուստի ընտրություններին կմասնակցեք առանձին: Ո՞րն է ՀԱԿ-ի առաջնային օրակարգը:

- Հայաստանի պետականության փրկությունը եւ սուբյեկտայնության վերականգնումը: «Ուժեղ Հայաստանի» հետ դաշինքի չկայանալը տեխնիկական եւ մարտավարական հարց է, որը չի փոխում մեր ռազմավարական նպատակը: ՀԱԿ-ը գնում է ընտրությունների առանձին՝ ներկայացնելու այն ռացիոնալ այլընտրանքը, որն այսօր օդուջրի պես անհրաժեշտ է մեր երկրին: Մենք բաց ենք համագործակցության համար բոլոր այն ուժերի հետ, որոնք գիտակցում են պահի լրջությունը եւ պատրաստ են հրաժարվել ամբիցիաներից՝ հանուն պետական շահի:

- Ընդդիմությունը կկարողանա՞ համախմբվել ընդդեմ ռեժիմի վերարտադրության, եւ ի՞նչ դեր կունենա այդտեղ ՀԱԿ-ը:

- Կոնգրեսը միշտ, այդ թվում՝ 2021-ին, եղել է կոնսոլիդացիայի կողմնակից, բայց ոչ թե «նախկին-ներկա» արհեստածին օրակարգի շրջանակում կամ առաջնորդվելով իշխանություն վերցնելու շարժառիթով, այլ՝ հանուն ճգնաժամային կառավարման եւ երկրի փրկության: Միավորման գլխավոր նախադրյալը պետք է լինի ընդհանուր հայկական օրակարգը՝ կանխել Հայաստանի վերջնական կազմալուծումը: ՀԱԿ-ի դերն այս գործընթացում առանցքային է, քանի որ մենք տիրապետում ենք այն պետականաստեղծ փորձին եւ դիվանագիտական զինանոցին, որը թույլ կտա երկիրը դուրս բերել ցուցադրական եւ դատարկ «խաղաղության դարաշրջանի» թակարդից:

- Սերժ Սարգսյանը ՀՀԿ համագումարում ասաց, որ իրենք ընտրություններին չեն մասնակցի, բայց ամեն ինչ կանեն, որ քաղաքացիները ձայն տան ընդդիմադիր ուժերին: Ինչպիսի՞ն է ՀԱԿ-ի արձագանքն այս առաջարկությանը, համագործակցության եզր տեսնո՞ւմ եք:

- Ընտրություններին ՀՀԿ-ի չմասնակցելու որոշումը կարող է որոշակի սեգմենտներ ազատել քաղաքական դաշտում: Սակայն ՀԱԿ-ի համար համագործակցության եզրերը որոշվում են ոչ թե անձերով, այլ՝ ռազմավարական նպատակներով: Եթե կան առաջարկներ, որոնք նպաստում են ընդդիմադիր ձայների կոնսոլիդացմանը եւ ռեժիմի հեռացմանը, դրանք պետք է քննարկվեն քաղաքական հարթության մեջ: Մեր սկզբունքը պարզ է՝ պետական շահը վեր է ցանկացած կուսակցական կամ անձնական հակասությունից:

- Իշխանությունը կրկին գործի է դրել «պատերազմից վախի քաղաքականությունը»: Շանտաժով փորձում են վերարտադրվել՝ գուժելով վերահաս պատերազմ: Վրաստանում, օրինակ, այդ հնարքը 2024 թ. հոկտեմբերին օգնեց գործող վարչակազմին: Մենք ի՞նչ սպասենք:

- Պատերազմի շանտաժը սեփական անճարակությունն ու ապազգային քաղաքականությունը քողարկելու գործիք է: Վրացական օրինակի հետ զուգահեռները խիստ վտանգավոր են: Եթե Վրաստանում վերոնշյալ տեխնոլոգիան ծառայեց պետության ներքին կայունությանը, ապա Հայաստանում տեսնում ենք հակառակ պատկերը. Փաշինյանը պատերազմի վախն օգտագործում է որպես հոգեբանական մահակ, դամոկլյան սուր՝ սպասվելիք նոր զիջումները լեգիտիմացնելու համար: Սա վտանգավոր խաղ է, քանի որ վախեցած եւ պատերազմի արհավիրքի միջով անցած հասարակությունը, հնարավոր է, չկարողանա դիմադրել: Մեր խնդիրն է՝ ցույց տալ, որ պատերազմի այլընտրանքը ոչ թե կապիտուլյացիան է, այլ՝ գրագետ դիվանագիտությունն ու պետական կառավարումը:

- «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն» նախընտրական մեթոդը նորություն չէ. գրեթե բոլոր իշխանությունների օրոք ընդդիմությունը թիրախավորվել է՝ իբր պատերազմ բերող ուժ: Ե՞րբ է կտրվելու այս արատավոր շղթան, թե՞ դա մեր երկրի անվտանգային առանձնահատկությամբ ու աշխարհագրական դիրքով է պայմանավորված:

- Նախ, պետք է հստակ եւ մեկընդմիշտ տարբերենք 2 մոտեցում. Տեր-Պետրոսյանի առաջարկած խաղաղությունը հիմնված էր փոխզիջումների եւ միջազգային երաշխիքների վրա՝ հաղթանակած պետության դիրքերից: Դա իրատեսական հնարավորություն էր՝ կանխելու մերօրյա աղետը եւ կառուցելու կայուն ապագա: Նիկոլ Փաշինյանի «խաղաղությունը» պարտվածի նահանջ՝ է՝ առանց որեւէ երաշխիքի: Սա ոչ թե կանխում է պատերազմը, այլ լեգիտիմացնում է թշնամու հաջորդ հարձակումը: Այս շղթան արատավոր դարձավ այն ժամանակ, երբ պատերազմի եւ խաղաղության հարցը քաղաքական ուժերի կողմից օգտագործվեց որպես պարզունակ քաղաքական կամ նախընտրական մանիպուլյացիա, այլ ոչ թե պետական ռազմավարություն կամ ազգային անվտանգության հարց: ՀԱԿ-ի դիրքորոշումը հստակ է եւ անփոփոխ. խաղաղությունը ոչ թե բարի ցանկություն է, սրտիկ-փուչիկ, այլ՝ քաղաքական հաշվարկի եւ ռազմավարական մտածողության արդյունք:

- ՀՀ առաջին նախագահը պարբերաբար քննադատում է գործող իշխանություններին եւ Փաշինյանին (ազգակործան պատուհաս): Կհաջողվի՞ այս ընտրություններով հեռացնել ապազգային իշխանություններին՝ հաշվի առնելով ընդդիմադիր դաշտի հակասությունները:

- Նախագահ Տեր-Պետրոսյանի բնորոշումը ժամանակի ընթացքում, ցավոք, միայն հաստատվում է: Այո՛, ընդդիմադիր դաշտում կան հակասություններ, բայց այսօր խնդիրը ոչ թե «իշխանություն վերցնելն է», այլ՝ պետության փրկությունը: Եթե ընտրողը գիտակցի, որ իր ձայնը ոչ թե անձի, այլ պետության գոյության համար է, այս ապազգային ռեժիմի հեռացումը կդառնա անխուսափելի իրողություն: ՀԱԿ-ն անելու է ամեն ինչ, որպեսզի այդ գիտակցումը դառնա տիրապետող:

Արա ԱԼՈՅԱՆ

ԵԹԵ ԳԱԶՆ ԱՆԳԱՄ 250 ԴՈԼԱՐ ԴԱՌՆԱ, ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԿՔԱՆԴՎԻ

«Հրապարակի» զրուցակիցը Հայաստանի դեմոկրատական կուսակցության առաջնորդ **Արամ Սարգսյանն** է:

- Ռուսաստան կատարած այցից հետո Նիկոլ Փաշինյանը որոշել է Ռուսաստանի նախագահին պատասխանել Իլհամ Ալիեւի եւ Ալեն Սիմոնյանի շուրթերով: Ալիեւը նոտա հղեց Պուտինին, թե չխոսեք Արցախի մասին, Ալեն Սիմոնյանն էլ հայտարարեց, որ եթե Հայաստանում գազի սակագինը բարձրանա, Հայաստանը դուրս կգա ՀԱՊԿ-ից եւ ԵԱՏՄ-ից: Ըստ Ձեզ՝ ի՞նչ հետեւանքներ կունենա այս ամենը:

- Սկսենք նրանից, թե ինչու կայացավ այդ այցը: Նիկոլն ինքն է խնդրել, որ այդ հանդիպումը կայանա: Նա, հավանաբար, հույս ուներ, որ այս անգամ էլ կասի՝ Վլադիմիր Վլադիմիրովիչ, մեզ մոտ ամեն ինչ լավ է, Պուտինն էլ կպատասխանի՝ լավ է, որ ամեն ինչ լավ է, եւ Փաշինյանը ցույց կտա, որ իրեն նաեւ Ռուսաստանն է հանդուրժում, քանի որ ինքն ամենաուժեղ ղեկավարն է, որն իրավունք ունի նման քաղաքականություն վարելու: Մի տեղ հակառուսականություն տարածելու եւ հետո էլ ցույց տա, որ, տեսեք, ես կարողանում եմ Ռուսաստանի հետ լեզու գտնել: Այս անգամ նրա մոտ դա չստացվեց: Չստացվեց, որովհետեւ դիվանագիտական տեսանկյունից աննախադեպ բան տեղի ունեցավ: Նման այցերի ժամանակ փակ նիստերի ժամանակ են խոսում խնդրահարույց հարցերի մասին եւ, առհասարակ, դժգոհություններ հայտնում միմյանց, բայց այս անգամ բանը հասավ նրան, որ այդ մասին խոսվեց հրապարակավ, իսկ դա նշանակում է, որ, ինչպես ժողովուրդն է ասում՝ դանակը հասել էր ոսկորին: Թե որքանով էր անհրաժեշտ այս փուլում, դա այլ հարց է: Դաշնակից երկրների փոխհարաբերությունները պետք է պարզաբանվեն, սակայն սա այլ թեմա է: Ինչ վերաբերում է այս մարդկանց կեցվածքին, ապա ինձ մոտ տպավորություն է, որ կարկատաններով քայլող մարդիկ են հայտնվել իշխանության գլխին, մինչդեռ նման մարդիկ առաջներում հասկանում էին, որ իրենք ինչ-որ մի բանում չեն հաջողել: Հասարակությունը եւ պետությունը առաջներում կարեկցում էին նման մարդկանց, իսկ այժմ այդ տեսակի մարդիկ, ցավոք, իշխանության մաս են դարձել, եւ իրենց թվում է, որ հավերժ են իրենք: Այն, ինչ անում են այսօրվա իշխանությունները, լկտի քաղաքականության նշան է: Եթե դու անդադար քծնում ես Ալիեւին, Էրդողանին, որոնք ոչ մի աղերս չունեն հայկական շահի հետ, իսկ հետո մեր կենսունակությունն ապահովող Ռուսաստանին, որտեղից միլիոնավոր տրանսֆերտներ են գալիս Հայաստան, ի դեպ՝ սխալ թվեր են ասում, պնդում են, որ խոսքը մի քանի հարյուր միլիոն տրանսֆերտի մասին է, սակայն իրականում միլիարդների է այն հասնում: Ահռելի գումար է մտնում ՌԴ-ից Հայաստան, բազմաթիվ ընտանիքներ իրենց գոյությունն ապահովում են այդ փողերով: Ինչ վերաբերում է քաղաքականության էությանը, ապա ինձ համար, մեր կուսակցության համար միանշանակ է, որ այս ամենը ծրագրված է: Ամեն բան անելու են, որ Հայաստանի Հանրապետությունից միայն անունը մնա, իսկ էությունը չլինի: Սա հետեւողական աշխատանք է, որն անում է այս տղան, որն իրեն դեռ խմբագիր է կարծում: Նա չի հաշտվում այն մտքի հետ, որ Հայաստանը կարող է հնարավոր զարգացում եւ հաջողություններ ունենալ: Նա անում է այն, ինչ ցուցադրական է, սակայն խորքային քաղաքականության տեսանկյունից ավերում է մեր պետությունը, պառակտում է մեր ազգը…. ինձ համար այս ամենը հասկանալի է, հուսանք, որ ուղիղ 2 ամսից կգա այս ամենի վերջը, իսկ եթե անգամ 2 ամսից չգա, ապա այն անպայման լինելու է: Ժողովուրդը չի հարմարվելու այս խայտառակության հետ: Ռուսաստանի կողմից այժմ իրողություն է ֆիքսվում, այստեղ չկա սպառնալիք: Եթե Հայաստանն այլ ճանապարհով գնա, ապա իրավիճակը, բնականաբար, կփոխվի: Այս մարդը Պուտինի աչքերի մեջ նայելով ասում է՝ երբ հարկ կհամարենք, այդ ժամանակ էլ կորոշենք, թե որ ուղղությամբ ենք շարժվում: Պատկերացրեք մի իրավիճակ. ձեր մտերիմ ընկերը կանգնի ասի՝ ավելի շահավետ ընկեր եմ փնտրում, եթե գտա, գնալու եմ նրա հետ, քեզ մենակ թողնելով: Պարզ չէ՞, որ նման պարագայում ցանկացած ադեկվատ մարդ իր գործողությունների ընթացքը կփոխի, կփոխի իր վերաբերմունքն ու անելիքները:

- Հնարավո՞ր է այս ամենի ֆոնին գազի գինը Հայաստանում շեշտակի թանկանա:

- Ամեն ինչ հնարավոր է: 177,5 դոլարը ցածր գին է այսօրվա դրությամբ: Հայաստանի համար անգամ 250-ը մեծ թիվ կարող է լինել: Այն ամբողջապես մեր տնտեսությունը կքանդի: Եթե հույսները դրել են, որ Ադրբեջանը կփոխարինի Ռուսաստանին, ապա եկեք չմոռանանք, որ թշնամի պետությունը երբեք չի կարող Հայաստանի զարգացմամբ շահագրգիռ լինել: Ի դեպ, Ադրբեջանը սկզբում կարող է էժան գին առաջարկել, հետո այն մի քանի անգամ թանկացնել: Էլ չեմ ասում, որ Ադրբեջանի օգտագործած խողովակում կա ղազախական եւ ռուսական գազ: Այդ պարագայում ես չեմ կարծում, թե մյուս գործընկերները կարող են թույլ տալ, որ էժան գներով Հայաստանին գազ վաճառվի: Այնպես որ, սրանք այնպիսի խնդիրներ են, որոնք այս լոպպազներին հասանելի չեն: Չգիտեմ, թե սրանց լոպպազությունը որտեղից է գալիս: Լկտի են ու լոպպազ, քուչի տղերքի վարքագիծ է, որոնք կարող են միայն տեռորի ենթարկման խմբակ ստեղծել, ուրիշ ոչինչ, իսկ այդ ամենը կանխարգելելը շատ հեշտ է:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱԺ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ՎԱԽԵՐՆ ԱՅԼԵՎՍ ՉԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԹԱՔՑՆԵԼ

Հունիսի 7-ի համապետական ընտրություններին սահմանադրական մեծամասնության հավակնող եւ այդ քվեներն արդեն իր գրպանում երեւակայող իշխող ուժը երեկ բացահայտեց, որ իրականում բոլորովին այդպես չէ, եւ իրենք ամեն գնով փորձում են փակել ընդդիմադիրների ճանապարհը: Երեկ ԱԺ արտահերթ նիստում խորհրդարանական ծանր մարտերից հետո ՔՊ-ին մի կերպ հաջողվեց հաղթանակ տանել եւ Ընտրական օրենսգրքում փոփոխություն իրականացնել, որ ընդդիմադիր ուժը՝ «Ուժեղ Հայաստանը», չկարողանա ընտրություններին մասնակցել Սամվել Կարապետյանի անվան տակ: Մի քանի ձախողված փորձից հետո թեժ պայքարում անցկացրին Ընտրական օրենսգրքում փոփոխությունների աղմկահարույց նախագիծը, որով ասվում է. «Կուսակցությունների դաշինքի անվանումը չի կարող պարունակել անձնանուն, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների անվանումներ կամ դրանց շփոթելու աստիճան նման անվանումներ եւ (կամ) դրանց հոլովաձեւեր»:

Պարզ է, որ այս նախաձեռնությունը հստակ ուղղված է «Տաշիր» ընկերությունների խմբի սեփականատիրոջ՝ Սամվել Կարապետյանի դեմ, որի անունն ու ազգանունը ներառված են իր կուսակցության՝ «Ուժեղ Հայաստան»-ի կողմից ստեղծված ընտրական դաշինքի անվանման մեջ: Իշխանությունները, որ անցած տարվանից կատաղի պայքար են սկսել Կարապետյանի դեմ՝ Էլ ունեցվածքն են խլում, Էլ ապօրինի քրեական հետապնդման ենթարկում, մինչեւ անգամ նրա լուսանկարների դեմ պայքարում, ոչ մի կերպ չեն հանգստանում՝ պարտության վախը հզոր է: Մի կողմից, իշխանական ողջ ռեսուրսն ուղղել են Կարապետյանի դեմ, արգելել են նրան հրապարակային հանդես գալ, ծաղրում են, թե արհեստական բանականության միջոցով է հանդես գալիս ու չունի ժողովրդի վստահությունը, մյուս կողմից էլ կռիվ են տալիս անգամ նրա անվան ու ստվերի դեմ՝ մատնելով իրերի իրական վիճակը: ՔՊ-ն տագնապած է եւ փորձում է անգամ փրփուրներից կախվել՝ իշխանությունը պահելու համար:

Հիմա ներկայացնենք այս օրենսդրական նախաձեռնության պատմությունը. ընդամենը երկու տարի առաջ՝ 2024 թվականի դեկտեմբերին, ՔՊ-ն Ընտրական օրենսգրքից հեռացրել էր այն դրույթը, որով արգելվում էր, որ կուսակցությունների դաշինքները պարունակեն անձնանուններ: «Իրազեկ քաղաքացիների միավորման» ղեկավար Դանիել Իոանանիսյանն օրերս հիշեցրել էր, որ 2025 թվականից առաջ Ընտրական օրենսգիրքն արգելում էր նման հնարավորությունը, սակայն 2024 թ. դեկտեմբերին ԿԸՀ-ի առաջարկությամբ, առանց քաղհասարակության հետ խորհրդակցելու, այդ արգելքը հանվել է:

«Ինձ ահագին զարմացնում է իշխանություններից որոշների ինքնավստահությունը, որոնք կարծում են, թե կարող են գաղտագողի փոխել Ընտրական օրենսգիրքը, բայց հետո այդ փոփոխության պատճառով գլուխները պատով են տալիս»,- նշել էր Իոանանիսյանը: Թե որն է այս դրույթը հանել-դնելու պատճառը, ինչու է Ընտրական օրենսգիրքն արգելում էր նման հնարավորությունը, սակայն 2024 թ. դեկտեմբերին ԿԸՀ-ի առաջարկությամբ, առանց քաղհասարակության հետ խորհրդակցելու, այդ արգելքը հանվել է:

«Ինձ ահագին զարմացնում է իշխանություններից որոշների ինքնավստահությունը, որոնք կարծում են, թե կարող են գաղտագողի փոխել Ընտրական օրենսգիրքը, բայց հետո այդ փոփոխության պատճառով գլուխները պատով են տալիս»,- նշել էր Իոանանիսյանը: Թե որն է այս դրույթը հանել-դնելու պատճառը, ինչու է այն հանվել օրենսգրքից, ապա վերականգնվել, եւ հիմա նորից են փորձում վերականգնել, ՔՊ-ից երեկ այդպես էլ հստակ պատասխաններ չհնչեցին: Միակ բացատրությունն այն էր, թե իբր տեխնիկական վրիպակ է եղել, չեն նկատել, երբ նկատել են՝ այսինքն հիմա, որոշել են կրկին չեղարկել, քանի որ ամբողջովին համամասնական ընտրակարգի դեպքում իբր անթույլատրելի է անձանց անունով քաղաքական ուժերի մասնակցությունն ընտրություններին: Փաստորեն, մի քանի տարվա ընթացքում տասնյակ անգամներ Ընտրական օրենսգիրք փոխած իշխող ուժում չի գտնվել գեթ մեկ կոճակ սեղմող, որ սեղմելուց առաջ իրեն նեղություն տար եւ կարդար օրենքի նախագիծը, մինչդեռ միլիոնավոր դրամների պարգեւավճար են ստանում՝ իբր լավ աշխատանքի համար:

Եթե անգամ ընդունենք, որ այդ փոփոխության բովանդակային մասով, իսկապես, չկան առարկություններ, սակայն ընտրություններից երկու ամիս առաջ Վենետիկի հանձնաժողովն արգելել է խաղի կանոնների փոփոխություն կատարել եւ ԸՕ հիմնական դրույթներ փոխել: Երեկ, ընդդիմադիրների այս նկատառումներին ի պատասխան, ՔՊ-ականները թութակի պես պնդում էին, որ ընդամենը տեխնիկական վրիպակ են շտկում: Եվ այդ համառ ու անհիմն պնդումներով էլ ցույց էին տալիս, որ նոր փոփոխությունն արվում է բացառապես ընդդեմ Սամվել Կարապետյանի՝ բացահայտելով իշխող ուժի սարսափն ընդդիմադիր թիվ մեկ դաշինքից: Անգամ պրոիշխանական Դանիել Իոանանիսյանը, որ երեկ խորհրդարան էր եկել այլ գործերով, լրագրողների հետ ճեպազրույցում նշեց, որ այդ կարգավորումը, արգելքը պետք է, բայց այդ արգելքն ընտրություններից երկու ամիս առաջ բերելը խնդրահարույց է: «Եթե այս փոփոխությունը լիներ գոնե մի քանի ամիս առաջ, մենք դա կողջունեիք: Ակնհայտորեն, որոշ քաղաքական ուժեր որոշակի բրենդինգ են ձեւավորել կամ ձեւավորում, եւ հիմա նրանք որոշակի ռեբրենդինգի կարիք են ունենալու»,- ասաց նա:

ՔՊ խմբակցությունը նախագիծն ընդունելու համար երեկ ստիպված եղավ երկու անգամ ԱԺ արտահերթ նիստն ընդմիջել, չէին կարողանում օրենքի ընդունման համար պահանջվող սահմանադրական մեծամասնությունն ապահովել դահլիճում՝ 69 հոգանոց ֆրակցիայում մոտ մեկ ժամ հետո միայն կարողացան 65 ՔՊ-ական պատգամավորի ներկայություն ապահովել. Հայկ Սարգսյանն ի սկզբանե դահլիճում չէր, նախորդ օրվա միջադեպից հետո երեւի բոյկոտել էր նիստը, փոխարենը՝ Գեղամ Նազարյանը ՔՊ-ականներին միացավ եւ կողմ քվեարկեց, քվեարկությունից առաջ Արթուր Հովհաննիսյանը մոտեցել էր նրան՝ հավանաբար նման ցուցում տվեց, եւ օրենքի փոփոխությունն իրականացվեց:

ՀՀ խելացի քաղաքացին, տեսնելով, թե ինչ ստրկական վիճակ է տիրում ՔՊ-ում, եւ ինչպես են ցանկացած օրենք՝ կոճակ սեղմելով ընդունում, պետք է մի որոշում կայացնի՝ ամեն ինչ անել, որ հաջորդ խորհրդարանում նման կոճակ սեղմողներ չհայտնվեն:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԶՈՐՔԸ ՓՈՔՐԱՆՈՒՄ Է, ԻՍԿ ՊՆ-ՈՒՄ ԶԲԱՂՎԱԾ ԵՆ ՇՔԵՐԹՈՎ

Երեկ ԱԺ-ում Հայկ Սարգսյանը, երբ քննարկվում էր նրա՝ գումարի դիմաց ավելի քիչ ծառայելու վերաբերյալ արդեն երկրորդ անգամ մերժված օրինագիծը, սենսացիոն բացահայտում արեց. «Զորակոչը կրիտիկական վատ վիճակում է: Զորքի թիվը 44 հազարից 14 տարում իջել է 14 հազար»: Խոսեց նաեւ այն մասին, որ բանակում շաբաթը մեկ են լոգանք ընդունում, հրապարակեց քաղաքացիությունից հրաժարվելու վիճակագրություն, ըստ որի՝ 2025-ին իգական սեռի մոտ 60 անձ է հրաժարվել քաղաքացիությունից, իսկ արական սեռի՝ 2.811 հոգի, ինչը նախորդ տարվա ցուցանիշից 44 տոկոսով ավելի է:

Հիշեցնենք, որ երբ ընդունվում էր բանակում ծառայությունը մեկուկես տարի դարձնելու վերաբերյալ օրինագիծը, հայտարարում էին, որ այն կկրճատի բանակից խուսափողների թիվը, բայց բանակի թիվը չի կրճատվի: Որոշ փորձագետներ, ինչպես, օրինակ, Կարեն Հովհաննիսյանը, առաջարկում էին էլ ավելի իջեցնել զինվորական ծառայության շեմը՝ այն հասցնելով 1 տարվա, որպեսզի ծառայողները շատանան: Փաստորեն, ճիշտ հակառա՞կն է ստացվել: Ռազմական փորձագետ Հայկ Նահապետյանը նշում է. «Ծառայությունը 6 ամսով կրճատելը նշանակում է անձնակազմի 25 տոկոսով կրճատում: Իհարկե, զորքը պետք է փոքրանար: Այլ կերպ չէր կարող լինել: Պաշտպանության ամրապնդման իմիտացիա է արվում: Քարոզչական դաշտում առավոտից երեկո դատարկախոսությամբ են զբաղված: Հիմա համեմատեք 14 հազարը Ադրբեջանի բանակի թվի հետ՝ 100 հազար է»:

Սուրեն Պապիկյանը հույս ուներ, որ ծառայությունը 1,5 տարի դարձնելով, զուգահեռաբար կաշխատի «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը, կունենանք մեծ թվով պայմանագրային զինծառայողներ:

«Սա կարող էր արդյունք տալ, եթե պայմանագրային զինծառայողները լինեին մի 15-20 հազար հոգի: Մնացածը ժամկետային լինեին, բայց այդ ծրագրի գրավչությունը ցածր է: Եթե այս տեմպերով գնանք, 10 տարի հետո նոր կարող է հասնենք ինչ-որ քանակային արդյունքի»,- ասում է ՊՆ մեր աղբյուրը: Ըստ նրա, ՊՆ կառավարումն արդյունավետ չէ, բանակի բարեփոխումը դանդաղ է իրականացվում:

«Հայաստանում կայուն թիվ է եղել բանակից փախչողների՝ մոտ 50 տոկոսը փախել է, 50 տոկոսը ծառայել է: Մարզերում՝ մի քիչ շատ, Երեւանում՝ ավելի քիչ: Հիմա որ մի տարի, տարիուկես խաղաղություն է, ընդհանուր զորակոչվածների թիվն ավելացել է: Զորակոչային տարիքի բանակայինների 52 տոկոսն է գնացել ծառայության»,- ասում է նա:

Հայկ Սարգսյանի ելույթը լայն քննարկումների տեղիք է տվել ոչ միայն հանրային հարթակներում, այլեւ՝ զինվորականության եւ պաշտպանության ոլորտին հարող շրջանակներում: «Հրապարակի» տեղեկություններով, այն, ինչի մասին խոսեց Հայկ Սարգսյանը, համակարգում վաղուց են իմացել, եւ դա այսբերգի միայն տեսանելի հատվածն է: «Իրականում, նա մի բան էլ քիչ է ասում: Այն, ինչ անում է նախարար Պապիկյանը, ուղղակի կատաստրոֆա է: Էսքան փողը, քաղաքական կապիտալը փոշիացնելը... Ամերիկացիների, ֆրանսիացիների, չինացիների, Հնդկաստանի հետ աշխատելու հնարավորություն ունի, որը երբեք չի եղել: Իսկ ի՞նչ է նա անում: Ոնց որ մեկին տաս մի շեն այգի, կապիտալ, փող, պարարտանյութ, հող, ու ինքն աշնանը քեզ բերք չտա»,- վրդովվում է ՊՆ-ին մոտ պաշտոնյան՝ խնդրելով իր անունը չնշել:

Իսկ ի՞նչ է անում Պապիկյանը: Մեր տեղեկություններով, այսօր նրա թիվ մեկ խնդիրը մայիսի 28-ի նախընտրական զորահանդեսի նախապատրաստական աշխատանքներն են, որոնք տեղի են ունենում մարտական պատրաստվածության հաշվին: Այն բարձիթողի վիճակում է:

«Մարտական պատրաստվածությունը դաս է, դա ոնց որ դաս լինի, դասը չեն անում, էնպես են անում, որ պառադ քայլեն»,- հայտնում է մեր աղբյուրը: Ինչպես հայտնի է, այն տեղի է ունենալու Հանրապետության տոնի օրը, նախատեսվում է ցուցադրել բանակի սպառազինությունը: Այս մասին արդեն հայտարարել է Փաշինյանը: Մեր աղբյուրները պատմում են, որ ՔՊ վերնախավում անգամ ոչ բոլորն են ողջունում այս գաղափարը՝ դեմ են շքերթին, քանի որ այն, որոշ ՔՊ-ականների կարծիքով, հակասում է խաղաղության մարտավարությանը: Ասում են՝ կստացվի, որ առավոտից երեկո խաղաղություն ենք քարոզում, իսկ իրականում՝ պատրաստվում ենք պատերազմի: Մեր տեղեկություններով, շքերթի գաղափարին դեմ են ԱԽՔ Արմեն Գրիգորյանը, ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը:

Թալանի, վատնումների ու չարաշահումների դեպքերն էլ բանակում քիչ չեն, սակայն իրավապահներն աշխատում են աղմուկ չբարձրացնել դրանց շուրջ: Օրինակ, տեղեկություն չեն տրամադրում Եղվարդի զորամասի հրամանատարի կալանավորման մասին, որը մեղադրվում է առանձնակի խոշոր չափերի վատնման համար՝ 500 մլն դրամի միջոցների: Լուրը հավաստի է, սակայն դատախազությունից դեռ չեն հաստատել:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԻՐԱՎՈՒՆՔ

ԱԿՆՀԱՅՏ ՀԱԿԱՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՔՊ-Ի ԳՐԱՆՑՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՄԵՐԺՎԻ

Արա ԱԼՈՅԱՆ

«Հրապարակի» զրուցակիցն իրավաբանական գիտությունների դոկտոր, արդարադատության նախկին նախարար, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ **Գեւորգ Դանիելյանն** է:

- Սահմանադրության փոփոխության մասին խոսող իշխանությունները, իրականում, թիվ մեկ սահմանադրախախտն են. օրինակները բազում են՝ վարչապետի ուղիղ ցուցումով անկախ պաշտոնյայի ազատումից մինչեւ քաղաքական հետապնդումներ, հիմա գումարվել է եւս մեկը՝ ընտրություններից շուրջ 3 ամիս առաջ ակտիվ քարոզարշավը:

- Սահմանադրությունն անհապաղ վերանայելու անհրաժեշտության մասին խոսում էին դեռ 2018 թվականից, ընդ որում, խնդիրն իբր իշխանության գերկենտրոնացումն էր վարչապետի ձեռքում: Այժմ արդեն արմատապես փոխվել են թեզերը, պարզվում է՝ կառավարման ձեւն այլեւս խնդրահարույց չէ, այն պետք է մնա նույնը, իսկ, այ, «Անկախության մասին» հռչակագիրը խիստ հրատապ հարկ է հանել Սահմանադրության տեքստից, որպեսզի Արցախի իրացված ինքնորոշման իրավունքի եւ Հայոց ցեղասպանության վերաբերյալ դրույթների բացակայությունը համահունչ լինի Ադրբեջանի եւ Թուրքիայի իշխանության սին պահանջներին: Ինչ վերաբերում է քարոզարշավը սահմանված ժամկետից անհամեմատ վաղ սկսելուն, ապա դա նախատեսված է օրենսդրությամբ, սակայն խնդիրը ոչ թե ինքնին նախընտրական քարոզչությունն է, այլ դրա իրականացման իրավական գոնե նվազագույն պահանջների նկատմամբ անթաքույց ոտնձգությունները:

- Իշխանության ներկայացուցիչները, իրենց գործը թողած, անհոգ վոյաժներ են անում, ցուցադրական այցելություններ, հանդիպումներ, երգ-պար՝ իրենց չընտրվելու դեպքում վախեցնելով նոր պատերազմով: Ինչպե՞ս կանխել պետական մակարդակով այս ինքնիրավչությունն ու քաղաքական ահաբեկումը:

- Ինչն արվում է պետական մակարդակով եւ իրավասու պետական մարմինների անթաքույց աջակցությամբ, հնարավոր չէ պետական մակարդակով կանխել: Իսկ պատերազմով ահաբեկելը ոչ միայն աղերսներ չունի նախընտրական քարոզչության տարրական պահանջների հետ, այլեւ զուտ իրավաքաղաքական հարթությամբ հեռու է իրականությունից: Նախ, Ադրբեջանին ոչ ոք չի լիազորել կամ երաշխավորել՝ պատերազմ սկսել, անգամ դա չի կարող անել հայրենական ցանկացած իշխանություն: Ինչ վերաբերում է Սահմանադրություն չընդունելն իբրեւ պատերազմ սանձազերծելու պատճառ հրամցնելուն, այ, սա խիստ վտանգավոր ծուղակ տանող նախաձեռնություն է: Այս թեզը շրջանառության մեջ դնելուց առաջ հարկ էր գիտակցել, որ Սահմանադրությունն ընդունվում է հանրաքվեով, որը կարող է համարվել կայացած, եթե մասնակցի ընտրական ձայն ունեցող քաղաքացիների առնվազն կեսը, մինչդեռ համապետական ընտրություններում անգամ այդպիսի ցուցանիշ չի գրանցվում, ուր մնաց խիստ անընդունելի Սահմանադրության տեքստի պարագայում: Ընդ որում, ԱՄՆ հակահետախուզության ղեկավարը վերջերս գաղտնազերծելով, որ դա հենց Ալիեւի պահանջն է, եւս մտահոգություն հայտնեց, որ օբյեկտիվորեն այդ պահանջն անիրականանալի է:

- Հանդիպումներից մեկի ժամանակ Փաշինյանին հարց ուղղեցին՝ պատրաստվո՞ւմ եք համաներում անել, ինչին վերջինս բացասական պատասխան տվեց: Ըստ Ձեզ, համաներման հարցն արդիական է, քանի որ տեւական ժամանակ չի իրականացվել, թե՞ դատապարտյալի ներման ինստիտուտի անկատարության պատճառով:

- Իր շարժառիթներով ու ընթացակարգերով համաներումը վաղուց վերածվել է զուտ քաղաքական ինստիտուտի, մինչդեռ էությամբ բոլորովին այլ ուղղվածություն ունի ներման ինստիտուտը, որը կոնկրետ անձանց է վերաբերում, որի կիրառման համար հիմք են ընդունվում ոչ թե համընդհանուր չափանիշները, որոնք լիարժեք չեն անհատական հարթությամբ, այլ կոնկրետ անձին վերաբերող բնութագրիչները: Ներման ինստիտուտը Սահմանադրությամբ ամբողջովին վերապահված է հանրապետության նախագահին, մինչդեռ ընթացիկ օրենսդրությամբ այնքան է աղճատվել այդ ինստիտուտը, որ անգամ ներման հանձնաժողովի կազմն է հաստատում վարչապետը: Արդյունքում էլ վերջերս Մայր Աթոռի հետ համաձայնեցված բարձրաստիճան հոգեւորականը գործադիր իշխանության նախաձեռնությամբ փոխարինվեց կարգալույծ եւ Հայ եկեղեցու դեմ իրենց արշավը սատարող հոգեւորականով: Բացի այդ, հարկ է վերանայել խնդրագրի ինստիտուտը, քանզի ներում պետք է կիրառել այն դատապարտյալի նկատմամբ, որը լիարժեք բավարարում է նախապես ամրագրված պահանջներին՝ անկախ խնդրագրի առկայությունից, հանձնաժողովի սուբյեկտիվ գնահատականներից եւ այլն: Բացի այդ, նախընտրական շրջանում համաներում կիրառելը, ըստ էության, հավասար զենքերից հրաժարվելու եւ իշխանական լծակներն անվերապահ կիրառելու հստակ ցուցիչ կդիտվի, ինչի պակասն առանց այդ էլ չենք տեսնում, ընդհուպ՝ հանրային մեդիամիջոցների բացահայտ միակողմանի ընդգրկվածությունը քարոզարշավին, վարչական ռեսուրսների օգտագործման դեպքերը, տարաբնույթ խոստումները եւ այլն:

- Իշխանությունների ցինիզմն այնտեղ է հասել, որ ՀԱԵ եւ Վեհափառի դեմ քստմնելի արշավը տեղափոխվեց ՔՊ նախընտրական ծրագիր՝ Ամենայն հայոց կաթողիկոսին հեռացնելու դրույթի տեսքով: Սա մեր նորանկախ պատմության մեջ թերեւս ամենից մեծ խարանն ու խայտառակությունն է: Արդյո՞ք սա քրեական պատասխանատվություն ենթադրող արարք չէ:

- Այդ ամենին ավելացել է նաեւ Հայ եկեղեցու կառավարման կարգը վերանայելու խնդիրը, ինչն արդեն անվերապահ ցուցիչ է Սահմանադրության եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 9-րդ եւ 12-րդ հոդվածների նորմերի անթաքույց շրջանցման մասին: Արդեն իսկ հօդս է ցնդում այն պնդումը, թե իբր Հայ եկեղեցու ներսում առկա է անլուծելի հակամարտություն, եւ ահա՝ իշխանությունը, բարի կամք դրսեւորելով, փորձում է միջամտել եւ լուծել: Այսպիսի ձեւակերպումներով դրույթները հենց վկայում են այն մասին, որ քաղաքական իշխանությունն ինքն է «բարենորոգման» անվան տակ նախաձեռնել Հայ եկեղեցին իշխանությանը հնազանդեցնելու եւ վերահսկողության տակ վերցնելու առաքելություն, ինչը ոչ մի պարագայում հաջողություն չի գրանցի: Պատահական չէ, որ կառավարման նոր, այսպես կոչված՝ սինոդալ կարգի օգտին են արտահայտվում իշխանամերձ օտարերկրյա սուբյեկտները՝ անտեսելով, որ այն ներդրվել է դեռեւս 19-րդ դարում, հենց Օսմանյան կայսրության ջանքերով, որպեսզի գաղութացված ժողովրդի եկեղեցին պահի իր անմիջական կառավարման եւ վերահսկողության ներքո: Որեւէ այլ հիմք չկա՝ ենթադրելու, որ հակաեկեղեցական արշավի շահառուները հենց այս արտաքին ուժերը չեն: Ընդ որում, Հայ եկեղեցին եզակի հզոր համաստիչ կառույց է, որ կարող է խիստ ազդեցիկ դերակատարում ունենալ համազգային խնդիրներ լուծելու տեսանկյունից, եթե այդ ամենը պետական իշխանության կողմից համարժեք ընկալվի, եւ անհրաժեշտ քաղաքական կամք դրսեւորվի: Ինչեւէ, ակնհայտ հակասահմանադրական նորմերով ծրագրի շրջանառությամբ ակնհայտ խախտումներով քարոզչության փաստը բավարար է այդ քաղաքական ուժի գրանցումը մերժելու համար, սակայն ներկա մթնոլորտում դա բացառվում է՝ վերը նշված պատճառներով:

ՏՆԿԻՆԵՐ, ԾԱՂԻԿՆԵՐ, ՋՈՒՐ, ԿՈՆՅԱԿ ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԱՐԳԵԼՔՆԵՐ ԵՆ ՍԱՀՄԱՆՎԵԼ

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

Հայաստանից դեպի Ռուսաստան բեռներ տեղափոխող ֆուռերը պարբերաբար խնդիրների են բախվում, եւ արտահանման հետ կապված արգելքները հատկապես կիրառվում են քաղաքական նպատակներով: Մենք այս տարիներին բազում նման իրավիճակների ենք բախվել, երբ հայկական բեռնատարները «լռվում» էին Վրաստանում կամ Լարսում, կամ Ռուսաստանն էր արգելքներ սահմանում: Հիմա կրկին սկսել են խոսել մի շարք ապրանքների հետ կապված գործող սահմանափակումների կամ արգելքների մասին, եւ դրա զանգը հնչեց մի քանի օր առաջ՝ Պուտին-Փաշինյան հանդիպման ժամանակ:

«Հրապարակ»-ի հետ զրույցում արտահանմամբ զբաղվող վարորդներից մեկը (չցանկացավ անունը հրապարակել) մեզ հայտնեց, որ 2 օր առաջ իրեն թույլ չեն տվել հատել սահմանը՝ մեքենան հետ են ուղարկել Հայաստան. «Մեքենան բեռնված էր տնկիներով, որոնք պետք է տեղափոխեի Ռուսաստան, հայկական անցակետն առանց խնդիր անցա, իսկ վրացական անցակետում, առանց ստուգումների ու բացատրությունների, թույլ չտվեցին անցնել սահմանը, հետ ուղարկեցին Հայաստան»:

Նրա խոսքով, բացի տնկիների արտահանումից, արգելքների է հանդիպել ծաղիկների արտահանման ժամանակ, ինչպես նաեւ՝ կոնյակի ու ջրի: Հարցին՝ կա՞ն այնպիսի ընկերություններ, որոնց բեռները թույլ չեն տալիս անցկացնել՝ պայմանավորված բեռի սեփականատիրոջով լինելով, նա նշեց. «Մենք տեղափոխումն իրականացնելուց աշխատում ենք լոգիստիկ ընկերությունների հետ, հաճախ չենք էլ իմանում, թե որ ընկերության բեռն ենք տեղափոխում»: Այսինքն, նման մոտեցումը վերաբերում է առհասարակ հայկական ապրանքներին՝ կարեւոր չէ, թե որ ընկերությանն են պատկանում:

Մեզ հետ զրույցում լոգիստիկ «Դավիան գրուպ» ՍՊԸ-ից հայտնեցին, որ ավելի շատ խնդիրներ կան ներկրման ժամանակ՝ Վրաստանի հետ: Վրացական կողմը մեքենաները հաճախ ուղարկում է խոր զննման եւ, անկախ բեռի պարունակությունից, 500 դոլարից մինչեւ մի քանի հազար դոլար գումար է պահանջում, որպեսզի թույլ տա իր տարածքով բեռները տեղափոխել: «Արտահանման հետ կապված խնդիր ունենք հողով ծառերի, ծաղիկների, կոնյակի մասով: Կոնյակը կարող են ուղարկել Թբիլիսիի խոր զննման անցակետ, ու այնտեղ մնա մոտ 1 ամիս, ու մինչեւ վճարում չեն անում՝ նվազագույնը 600 դոլար, թույլ չեն տալիս, որ բեռը տեղափոխեն: Օրինակ, հեղուկ գազի ներկրման դեպքում մեկ մեքենայի համար վրացական կողմը 5 հազար դոլար գումար է վերցնում, ինչն էլ էականորեն ազդում է գազի ինքնարժեքի վրա»,- ասաց մեր զրուցակիցը: Սա այն գումարն է, որն արդեն մեկ տարուց ավելի գանձում են վրացիները, որն անօրինական է, եւ որի մասին ահազանգերին ի պատասխան, ՀՀ վարչապետն ու էկոնոմիկայի նախարարն ասում էին՝ դիմեք իրավապահներին:

Հարցին, թե կա՞ն բեռներ կամ ընկերություններ, որոնց բեռների մասով արգելք է գործում ռուսական կողմից, ոչ թե Վրաստանից, ընկերությունից նշեցին, որ ժամանակ առ ժամանակ նման դեպքեր լինում են. «Հիմնականում դրանք լինում են իրավիճակային, վերջին շրջանում նման խնդրի բախվել ենք ջրեղեն, հյութ արտահանելու հետ կապված, հողով ծառերի ու ծաղիկների հետ կապված: Բեռներն ուղարկում են խորը զննման, ինչը հավելյալ ծախս է, օրինակ, միայն բեռը դատարկելու եւ բարձելու համար անհրաժեշտ է 60 հազար ռուբլի վճարել: Բացի դա, եթե մեքենան մի քանի օր կանգնում է, այդ դեպքում վարորդին եւս օրապահիկ պետք է վճարել»:

ՏԵՍԻՆ

ԻՆՉՊԵՍ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՁԱՅՆ ՓՈՇԻԱՑՆՈՂՆԵՐԻՆ

Հայ ազգային կոնգրեսը որոշեց միայնակ մասնակցել 2026 թ. խորհրդարանական ընտրություններին, թեեւ բանակցություններ էր վարում՝ «Ուժեղ Հայաստանի» հետ դաշինք կազմելու համար, բայց, ըստ ՀԱԿ-ի տարածած հաղորդագրության, բանակցությունները տապալվել են: Ավելի տրամաբանական կլիներ, եթե ՀԱԿ-ը հայտարարեր, որ չի մասնակցելու խորհրդարանական ընտրություններին եւ իր համախոհներին կոչ է անում քվեարկել «Ուժեղ Հայաստանի» օգտին, քանի որ հենց այդ կուսակցությանը եւ նրա առաջնորդին են համարում գործող իշխանության իրական այլընտրանք: Այն, ինչ անում է ՀԱԿ-ը, ընդդիմադիր ընտրողների ձայների դասական փոշիացում է: 2021-ի ԱԺ ընտրությունների ժամանակ ՀԱԿ-ը ստացել էր մոտ 20 հազար ձայն՝ ընտրության մասնակիցների ձայների 1,54 տոկոսը, այսինքն, այդքան ձայն կամ այդքան տոկոս փոշիացրել էր, որից ամենաշատը օգտվեցին ՔՊ-ն եւ Նիկոլ Փաշինյանը: ՀԱԿ-ի վարկանիշն անցած 5 տարիների ընթացքում չի ավելացել, բայց ՀԱԿ-ը, միեւնույն է՝ որոշել է մասնակցել ընտրություններին, գնում է նույն ճանապարհով՝ ձայն փախցնել հօգուտ իշխանության: Անում է դա գիտակցված՝ ըստ իս:

Ընդհանրապես, ինչպե՞ս որոշել՝ ով է ձայն փախցնող, փոշիացնող, իսկ ով հնարավորություն ունի հաղթահարելու անցողիկ շեմը: Դրա համար կա միայն մի ճանապարհ, մի քննություն՝փողոց մարդ հանելը: Ժամանակին՝ 2008-ին, երբ ՀԱԿ վարկանիշը դեռ բարձր էր, Լեւոն Տեր-Պետրոսյանն ընդդիմադիր դաշտը գրաված պահելու՝ իրենց ուղղված մեղադրանքներին ի պատասխան հայտարարում էր, որ մյուս ընդդիմադիր ուժերին որեւէ մեկը չի խանգարում՝ փողոցում 100 հազար մարդ հավաքել եւ դառնալ ընդդիմության առաջնորդ: Ընդդիմության առաջնորդ ուժը միշտ որոշվել է փողոցով՝ որ ուժը կարողանում է մարդկանց հանել փողոց, ում կոչով մարդիկ դուրս են գալիս փողոցներ եւ հրապարակներ, այդ ուժն էլ ընդդիմության առաջատարն է: Կարո՞ղ է ՀԱԿ-ը հիմա փողոց մարդ հանել, կամ՝ քանի՞ մարդ ՀԱԿ-ի ու նրա առաջնորդի կոչով կհավաքվի Ազատության հրապարակում, դրանով էլ կարելի է որոշել տվյալ կուսակցության հանրային աջակցության աստիճանը, եւ թե որն է ընտրություններին նրա մասնակցելու նպատակը՝ հաղթանա՞կը, թե՞ ձայն փախցնելը:

«Ուժեղ Հայաստանը», որն իրեն համարում է ընդդիմության առաջատար ուժը, ռիսկի է գնում՝ ապրիլի 11-ին կոչ անելով իր կողմնակիցներին՝ հավաքվել Ազատության հրապարակում: Ռիսկ այնքանով, որ ուզում է ոչ թե սոցիալական հարցումներով կամ փորձագիտական մակարդակով, այլ փողոցում ցույց տալ, որ ինքն է ընդդիմության առաջնորդը, որ իր կոչով հազարավոր կամ տասնյակ հազարավոր մարդիկ կարող են հավաքվել հրապարակում: Եվ սա՝ այն դեպքում, երբ կուսակցության առաջնորդը կալանավորված է եւ զրկված է հանրահավաքին մասնակցելու հնարավորությունից: Բացի այդ, Հայաստանում հիմա այնպիսի բռնապետական, ռեպրեսիվ մթնոլորտ է, ինչպիսին չի եղել որեւէ ժամանակահատվածում, որեւէ ընտրությանը նախորդող նախընտրական շրջանում: Եթե մարդիկ հավաքվեցին, «Ուժեղ Հայաստանը» կարող է իրեն հռչակել ընդդիմության առաջնորդ:

«Ուժեղ Հայաստանի» հանրահավաքը կարելի է համարել նաեւ «չելենջ»՝ ուղղված մյուս ընդդիմադիր կուսակցություններին եւ նաեւ՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը: Կոչ՝ կրկնելու այն, ինչն իրենց հաջողվել է, եթե, իհարկե, հաջողվի Ազատության հրապարակում լեփ-լեցուն հանրահավաք կազմակերպել: Ընդդիմության մեջ իրենց առաջնորդ կամ գոնե անցողիկ համարող մյուս ուժերը եւս կարող են հանրահավաքի կոչ անել եւ ցույց տալ, որ իրենք էլ ոչ պակաս հանրային աջակցություն ունեն: Հանրահավաք հրավիրելու համար պետք է ունենալ բավականաչափ համարձակություն, քանի որ, ինչպես դրա հաջողումը, այնպես էլ տապալումը կարող է էականորեն ազդել կուսակցության հեղինակության վրա եւ կանխորոշել նրա քաղաքական ճակատագիրը:

Այս չելենջը կարող է ուղղված լինել նաեւ իշխանություններին, որովհետեւ իշխանությունը եւս իր ունեցած քաղաքական աջակցությունն ապացուցելու համար կարող է հրապարակներում մարդ հավաքելու կոչ անել, մանավանդ որ Փաշինյանը հայտարարում է, որ սա հեղափոխության երրորդ փուլն է, իսկ առանց փողոցի հեղափոխություն չի լինում: 2018-ին, երբ ՔՊ-ն ուներ բավարար հանրային աջակցություն, կարողանում էր հրապարակներում մարդ հավաքել, իսկ 2023 թ. Երեւանի ավագանու ընտրությունների ժամանակ, երբ Փաշինյանը փորձեց վարչական ռեսուրսի կիրառմամբ մարդկանց բերման ենթարկել երթի, արդյունքում կարողացավ ընդամենը 3 հազար մարդ հավաքել, որոնց կեսն էլ երթի ընթացքում փախավ եւ չհասավ Երեւանի քաղաքապետարան, որտեղ նախատեսված էր հանրահավաքը, ինչը եւ ի ցույց դրեց իշխանության հեղանակազրկված լինելը: Վրաստանի իշխանությունները, հակառակը՝ 2024 թ. աշնանը կայացած խորհրդարանական ընտրությունների ժամանակ 2-3 պրոիշխանական հանրահավաք կազմակերպեցին, եւ չնայած ընդդիմությունը բողոքում էր, որ այդ մարդկանց հավաքել ու հանրահավաքի են բերել բռնի ուժով, բայց հարյուր հազարավոր մարդիկ չփախան փողոցներից եւ հրապարակից:

Բոլոր նրանք, ովքեր կվախենան փողոցում մարդ հավաքելու կոչ անել, կամ նրանց կոչին արձագանքողներ չեն լինի, բայց իրենք, այնուամենայնիվ, կմասնակցեն ընտրություններին, նրանց պետք է համարել ձայն փախցնողներ, մինչեւ ընտրությունները: Ինչ վերաբերում է իշխանությանը, եթե Փաշինյանը վախենա-հրաժարվի գոնե մեկ նախընտրական հանրահավաք կազմակերպելու գաղափարից, ուրեմն նրա հույսն էլ է ընտրություններ կեղծելը: Սա 30 եւ ավելի տարիների ընթացքում փորձված եւ փորձություն բռնած բանաձեւ է:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԱԶԳՈՎԻ ՂՈՒՐԲԱՆ ԵՂԱՆՔ ՑԱԾՐԱԿԱՐԳ ՄԱՐԴՈՒ «ԲԱՐՁՐԱԿԱՐԳ» ԶԱՎԱԿՆԵՐԻՆ

«Իմ տղան շատ բարձրակարգ տղա է, դուք իր գիտելիքների չափ ունեցայիք, դուք էլ չէիք ծառայի»,- լրագրողների հետ զրույցում իր ձագով հպարտանում է ագռավը, որի անունն է ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյան: Սա նման է մի տխրահռչակ ՔՊ-ականի ասածին, թե մեզ միայն զինվորներ չեն հարկավոր, այլ նաեւ՝ գլուխներ: Ահա՝ Անդրանիկ Քոչարյանի տղան էլ երեւի այդ գլուխներից մեկն է:

Ինչպես է նա որոշել, որ իր որդին բարձրակարգ է, ավելի բարձրակարգ, քան 44-օրյա պատերազմում զոհված հրաշք սերունդը: Իրականում, բարձրակարգ երիտասարդների գլխին պատուհասած պատերազմի հեղինակներից ու արդարացնողներից մեկը պարծենում է, թե ինքն ունի բարձրակարգ որդի: Նրա բարձրակարգ որդին կարող էր գնալ բանակ եւ բարձրակարգ ծառայություն մատուցել հայրենիքին: Մինչդեռ հայրենիքին ամենաբարձրակարգ ծառայությունը մատուցեցին տղաներ, որոնց ծնողներն անգամ չէին հասցրել նրանցով հպարտանալ, նրանք էլ չէին կարողացել ամբողջությամբ ցույց տալ իրենց գիտելիքներն ու տաղանդները: Հազարավոր տղաներ՝ շատ արժանավոր ծնողների զավակներ, զոհվեցին հանուն հայրենիքի, որպեսզի Անդրանիկ Քոչարյանն ու իր նմաններն ուրանան Արցախը, առ ոչինչ գնահատեն տղաների սխրանքը, շարունակեն պաշտոնավարել այդ զոհերի ու կորուստների գնով ու հավակնեն էլի շարունակել պաշտոնավարել՝ իրենց անհիմն մեծացած էգոյով, գոռոզամտությամբ, պոռոտախոսությամբ, նյարդախախտ անելով ողջ հանրությանը:

Մենք չգիտենք, թե ով է Անդրանիկ Քոչարյանի որդին, ինչով է նա բարձրակարգ, ինչ գիտելիքներ ունի, որոնք այդքան շատ են ու որակյալ, որ նա իրավունք ունի ծառայած չլինել, ու ինքը, որպես հայր, իրավունք ունի այդպես հպարտանալ ծառայության համար չափազանց բարձր կարգ ունեցող իր զավակով: Բայց մի բան վստահաբար կարող ենք ասել, որ ծառայության համար հենց բարձրակարգ գիտելիքներ էլ պետք են, ծառայությունը պատիժ չէ, որ հասնում է անգրագիտության համար: Եվ, վստահաբար, 44-օրյա պատերազմում զոհված տղաներից յուրաքանչյուրը, բացի գիտելիքներից, որ նրանք ունեին, նաեւ բարձրակարգ էին, որովհետեւ հերոս են, անձնազոհ, արժեքներ կրող մարդիկ, ովքեր գիտեին, որ կա աշխարհում մի բան, հանուն որի հնարավոր է եւ արժե զոհել ամենաթանկը՝ կյանքը:

Պատերազմից հետո ես բազմաթիվ զոհված տղաների տներ եմ այցելել, խոսել եմ ընտանիքների հետ, հերոս տղաների կյանքն եմ լուսաբանել ու զարմացել եմ, թե որքան բարձրակարգ սերունդ կորցրինք, որքան արժեքավոր մարդիկ գնացին՝ կյանք չտեսած, ու կյանքը չտեսավ, թե ինչպիսին էին նրանք՝ զոհված Ալենը, Արենը, Հայկը, Դավիթը, Արմենը... հազարավոր, իրոք, բարձրակարգ տղերքը:

Այս բառերը պետք է լավ լսեն ու լավ հիշեն մարդիկ, ովքեր պատրաստվում են այս մարդու քաղաքական ուժին նորից ընտրել, նորից նրանց ներշնչել, թե իրենք բարձրակարգ են, ինչ-որ բանով արժանի են ազգի ընտրյալը, հարգարժանն ու բարձրակարգը լինելու պատվին: Գուցե արժանի են, բայց ո՞ր ազգի, սա է պետք ճշտել: Արժանի՞ է արդյոք Անդրանիկ Քոչարյանը՝ պոռոտախոս, ինքնահավան մեկն իրեն կամ իր զավակին համարել բարձրակարգ հայ: Մի անգամ էլ լրագրողներից մեկի ինչ-որ դիտարկմանը պատասխանեց, թե «ղուրբան լինեք իմ երկու որդիներին», այն ժամանակ պետք է արդեն հասկանայինք, որ խոսքը, փաստորեն, առանձնապես բարձրակարգ որդիների մասին է: Արդյոք բավարար չէ՞, որ մեկ անգամ արդեն մենք ազգովի ղուրբան եղանք նրան ու նրա որդիներին:

Ախր, դուք ինչպե՞ս կարող եք ունենալ բարձրակարգ որդի, երբ ինքներդ այդքան ցածրակարգ եք, ինչպե՞ս է դա հնարավոր.հարց է ծագում: Իրավունք ունե՞ք արդյոք հպարտանալ ծառայության համար չափազանց արժեքավոր ձեր զավակով, երբ մարդիկ հազարներով կորցրել են իրենց զավակներին նաեւ ձեր ապաշնորհ ու պատեհապաշտ կառավարման ընթացքում: Դո՞ւք եք, որ պետք է որոշեք մարդկանց կարգը, ախր, դուք ո՛չ գիտելիքներով եք փայլում, ո՛չ հայրենասիրությամբ, ո՛չ արժանապատվությամբ ու ազնվությամբ: Այդքան ցածրակարգ լինելով՝ դուք որոշում եք, թե ով է բարձրակարգ, ով՝ ցածրակարգ:

Ես խորհուրդ եմ տալիս իմ գործընկեր լրագրողներին՝ որոշում կայացնել ու մեկընդմիշտ շրջանցել այս բարձրակարգ ինքնահավան մարդուն: Մի՞թե նա կարող է որեւէ արժեքավոր ինֆորմացիա փոխանցել հանրությանը, մի՞թե հանրությունը սպասում է նրա խոսքին, ուզում է լսել նրա պատասխանները, մի՞թե որեւէ մեկը հավատում է նրան: Նա հայտնի է լրագրողների հետ անզուսպ ու վիրավորական տոնայնությամբ, ուստի պետք է նրան արհամարհել, չտալ ոչ մի հարց՝ որպես հանրության համար 0 հետաքրքրություն ներկայացնող անձ: Բայց, մյուս կողմից, այդ մարդու իսկական դեմքը տեսնելու ու կերպարը հասկանալու համար էլի պետք է շնորհակալ լինենք լրագրողներին, որ սեփական նյարդերի հաշվին ամեն անգամ բացահայտում են այսպիսի մարդկանց ցածրակարգ էությունն ու բարձրակարգ ինքնահավանությունը:

Շաքե ԱՎՈՅԱՆ

ԲԵԼԳԻԱ

ՄԵԾ ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅՈՒՆ ԱՊՐԵՑԻ, ԵՐԲ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀՐԱՄԱՅԵՑ ՄՈՌԱՆԱԼ ԱՐԱՐԱՏԸ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԵՑ ԿԱՍԿԱԾԻ ՏԱԿ

Նիկոլ Փաշինյանից հիասթափության ալիքն օրեցօր մեծանում է: Նրանք, ովքեր 18-ին կամ դրանից հետո անգամ Նիկոլ Փաշինյանի հետ հույսեր էին կապում ու երկրպագում նրան, այժմ երազում են նրա հեռացման մասին: Բելգիայում բնակվող հայ գրող, հրապարակախոս **Սոնա Արշունեցին** 2018-ից հետո Նիկոլ Փաշինյանի մեծ երկրպագուն էր, նա այն խմբի մեջ էր, որոնք հատուկ գնում էին Փաշինյանի հետ նկարվելու, սակայն այսօր խորապես հիասթափված է: Մենք զրուցել ենք նրա հետ:

- Ինչն է ամենից շատ հիասթափեցրել Ձեզ Նիկոլ Փաշինյանից:

- Այո, համակրում էի, վստահում եւ մեծ հույսեր էի կապում, բայց այն պահից հիասթափվեցի, երբ Ադրբեջանի զինված ուժերը 2021-ի մայիսի 12-ին ներխուժեցին ՀՀ սուվերեն տարածք՝ Սյունիքի եւ Գեղարքունիքի մարզ, մեր իշխանությունները հանդուրժեցին, որն առիթ հանդիսացավ, որ նոյեմբերի 15-ին ավելի խորանան արեւելյան ուղղությամբ, եւ արեւելյան տեղամասերից մեկում գրավեցին ՀՀ ԶՈՒ չորս մարտական դիրք ու ամրացան… Փաստորեն, եթե մեր ռազմավարական գործընկեր Ռուսաստանը եւ ՀԱՊԿ-ը չմիջամտեցին, հրաժարվեցին օգնել՝ հանել Ալիեւի զինուժը մեր երկրից, ուրեմն մենք որպես պետություն այնքան անզոր ենք, որ մեր հողի մեջ չկարողացանք շրջափակել եւ գերի վերցնել, երբ դեռ նոր-նոր էին խարիսխ գցել Սեւ լճի տարածքում եւ վրաններում էին: Չգիտեմ՝ մեր իշխանություններն ինչ հրաշքի էին սպասում կամ ում վրա էին իրենց հույսը դրել: Այդ պահին իմ մեջ մտավախություն արթնացավ՝ ինչպես Արցախը կորցրինք, մի օր էլ Հայաստանը կկորցնենք, քանզի մենք թույլ ու վախկոտ ենք, որ մեր հողի մեջ մտած թշնամուն հանդուրժում ենք: Ոչ մի պատճառաբանություն չեմ ընդունում, դաշնակիցների հույսին ապավինող հոգեբանությունն էն գլխեն է եղել մեր ազգի մեջ եւ հիմա էլ շարունակվում է… եւ ինչքա՞ն կարող ենք այսպես վախեցած երկիր ղեկավարել, ուղղակի պետք էր, որ մեր գեներալները, հետախուզությունը լավ մշակված օպերացիա մշակեին, շրջափակեին տարածքը եւ գերի վերցնեին, երբ դեռ վրանային էին հենակետերը… Ալիեւը գեթ մեկ ժամ կհանդուրժե՞ր, եթե մեր զինուժը հայտնվեր իր տարածքում: Այս վիճակից դուրս գալու միակ ելքը Փաշինյանո ընտրեց խաղաղության ճանապարհը, ցավոք, այդ քայլն էլ չօգնեց, եւ այս հանդուրժողականությունը բերեց նրան, որ գնալով Ալիեւն ավելի լկտիացավ. Արցախն իրենով անելուց հետո արդեն պահանջների տարափ թափեց՝ զավթելու Հայաստանի սուվերեն տարածքները… Անգամ 2025-ի օգոստոսի 8-ի «Միջազգային խաղաղության եւ բարգավաճման Թրամփի ուղի» TRIPP - պամանագիրը վերջնական չկնքվեց, Ալիեւի մի քանի կետերից բաղկացած պահանջների համար, եւ հիմա այդ կետերը կատարելու փուլում ենք. լուծարվեց Մինսկի խումբը, հետ կանչվեցին Հաագայում շահած մեր դատական հայցերը, հիմա Հռչակագիրն է հանվում Սահմանադրությունից, ու դրանով չեն վերջանում Ալիեւի պահանջները. «Արեւմտյան Ադրբեջան» է պահանջում, 300 հազար ազերի փախստականների վերադարձ, անկլավներ, եւ կոնկրետ Տիգրանաշենի անունն է նշում, որը Հայաստանը բաժանում է գրեթե երկու մասի… ու եթե այդ 300 հազարը Տիգրանաշենի տարածքում բնակվեն, տարածվելու են դեպի Սյունիք, մի քանի տարի անց մեծամասնություն են կազմելու այդ տարածքում, եւ ականատեսն ենք լինելու երկրորդ Կիպրոսի…. Ու այս ամենը չէր լինի, եթե Սեւ լճից հանած լինեինք Ալիեւի զինուժը… Թրամփի ուղու նախնական պայմանագրում այդքան կետեր մեզ դեմ տալով, զարմանում եմ, որ Փաշինյանը ոչ մի պահանջ չներկայացրեց. օրինակ՝ մեր փախստականների վերադարձը եւ ամենակարեւորը՝ եթե գնում ենք խաղաղության ճանապարհով, ուրեմն թող Ալիեւը մեր հողից հանի իր զինուժը, թողել է, որ մի քանի տարի հետո սահմանազատու՞մ լինի, երբ Ալիեւը շինարարական աշխատանքներ է իրականացնում…. Այսքա՞ն անտարբեր, ասես ամեն բան իր երկրում նորմալ է, ինքը հեծանվավազքի մրցումներ է կազմակերպում. գժվել կարելի է…. Հիմա անցնենք Թուրքիայի հետ մերձեցմանը. Էրդողանը եւ Հաքան Ֆիդանը հայ-թուրքական սահմանը բացելու իշխանությունների ձգտումները, որ հայտարարում էին, թե առանց նախապայմանների է, պարզվեց, որ Թուրքիայի պահով էլ տնային աշխատանք ունենք կատարելու, այն էլ՝ լուրջ տնային աշխատանք. հենց այնպես չէր Փաշինյանի՝ Արարատ լեռն ուրանալը, Հայոց պատմությունը մերժելը, Հայոց ցեղասպանությունը սրան ու նրան վերագրելը՝ կոնկրետ առաջադրանքներ էին: Որպեսզի թուրքի ճակատից մաքրվի ցեղասպանի խարանը, եւ ահա՝ մի քան օր առաջ Փաշինյանը գնաց այդ քայլին՝ հայտարարելով. «Հրաժարվում եմ պատմական արդարության վերականգնման օրակարգից», բայց այս պարագայում անգամ սահմանը չի բացվի, քանզի Էրդողանը սպասում է Թուրանի ճանապարհի բացմանը, որ միավորի թյուրքալեզու երկրներին ու հասնի պանթյուրքիզմի ծրագրի հաղթանակին: Դա Էրդողանի համար կյանքի նպատակ է: Ամենամեծ հիասթափությունն ապրեցի, երբ Փաշինյանը ժողովրդին ուղղակի հրամայեց մոռանալ Արարատն ու Հայոց պատմությունը եւ ցեղասպանությունը դրեց կասկածի տակ: Ես, որ փոքր հասակից եմ նվիրվել ցեղասպանության միջազգային ճանաչմանը՝ լոբբիստական մեծ աշխատանք եմ տարել, իմ հեղինակած գրքերը 4 լեզվով տարածել եմ ԵՄ-ում, ԱՄՆ կոնգրեսում, անգամ հասա նրան, որ բրիտանացի հայտնի լրագրող՝ հայամետ Ռոբերտ Ֆիսկն իմ «բաց նամակները»՝ ուղղված ԱՄՆ նախագահներին, տարածում էր սոցցանցերում, հեղինակավոր թերթերում: Փաշինյանն իր այդ քայլով թքեց իմ անցած ճանապարհի, իմ պայքարի վրա, ես, որ հեղափոխության հետ կապված մեծ հույսեր էի փայփայում, որ գալով իշխանության՝ հետամուտ կլինի Հայոց ցեղասպանության հարցը Հաագայի միջազգային դատարանում բարձրացնելուն, տեր կկանգնի վիլսոնյան «Իրավարար վճռին», հատկապես ԱՄՆ նախագահ Բայդենի՝ ցեղասպանությունը ճանաչելուց հետո, հատկապես որ ունեինք Հաագայի դատարանում մի քանի դատ շահած Եղիշե Կիրակոսյանի պես խելացի, պրոֆեսիոնալ իրավաբան, բայց Փաշինյանը ոչ միայն անտեսեց, այլեւ Ալիեւին գոհացնելու համար աշխատանքից հեռացրեց եւ շահած դատերը հետ կանչեց: Հիասթափությունս կրկնապատկվեց, երբ մեծ ճիգերի գնով դուրս եկա անհատի պաշտամունքի կաղապարներից, շատ նիկոլապաշտներ անցել են զրպարտանքի, իբր՝ ճամբարափոխ եմ եղել, նախկիններին եմ ծախվել փողով… Հանգստացեք, ես, որ տասնյակ բացահայտումներով նախկինների ազգադավ քայլերն եմ մերկացրել, նրանք ինձ համար այսօր էլ մերժված են, նրանց հովանավորողը հենց իշխանությունն է….

- Իսկ ընդդիմադիր ո՞ր ուժը կարող է, ըստ Ձեզ, երկիրը հանել այս վիճակից:

- Ես անհամբեր սպասում եմ, որ ընտրություններին մասնակցող ընդդիմադիր ժողովրդավարական առողջ ուժերը միավորվեն, միանան Դավիթ Սանասարյանի համախմբման կոչին, միայն համախմբումը կբերի հաջողություն, եւ կբացառվեն ՔՊ-ի վերընտրվելու շանսերը, ժողովուրդն էլ հնարավորություն կունենա՝ նոր ասպարեզ եկած ուժերին շանս տալ: Նիկոլի վերընտրվելու դեպքում մենք ունենալու ենք ՀՀ սուվերեն տարածքների կորուստ, մեզ պարտադրվելու է 300 հազար ազերի փախստականների վերադարձ, անկլավների հանձնում, շրջանառության մեջ դրված «Արեւմտյան Ադրբեջան», եւ այդպես շարունակ: Արցախը կորցնելուց հետո մեր ժողովուրդը պատրաստ է նման զիջումների՝ այս մի թիզ մնացած հողակտորից:

- Փաշինյանը սպառնում է, որ եթե ինքը բացարձակ մեծամասնություն չկազմի, պատերազմ կսկսվի:

- Եկեք վերլուծենք. ինչո՞ւ է նման բան հայտարարել, եթե խաղաղություն է, եթե ցորեն ու բենզին են ներկրում. չե՞ք զգում, թե շան գլուխը որտեղ է թաղված, եւ ինչու Հաքան Ֆիդանով, Ալիեւով հանդերձ ձգտում են, որ անպայման Նիկոլն ընտրվի՝ սեպտեմբերին ահեղ պատերազմ Ալիեւն է Փաշինյանին ահաբեկել: Երբ Նիկոլն իր թիմով սկսեց քարոզարշավը, Փաշինյանի կողմից ինֆորմացիայի այդ արտահոսքը տեղի ունեցավ, որ եթե իրենք չընտրվեն, պատերազմ է լինելու եւ այն էլ՝ ահեղ: Հետո տեսան, որ ժողովրդի մոտ դժգոհության ալիք բարձրացավ, խոսքերը շուռ տվեցին, թե իբր Քոչն ու Սերժը, Ս. Կարապետյանը եւ Ծառուկյանը եթե հաղթեն, պատերազմ են հրահրելու: Մի պատմություն կա. նախկինում երեխաները եկեղեցիներում են դպրոց հաճախել, քյոխվի տղան ծույլ է լինում, տերտերը բարկանում է եւ ասում՝ սովորիր, սովորիր, հորդ նման էշ մի մեծացիր, տղան գնում բողոքում է հորը, քյոխվեն գալիս է տերտերի վրա կռիվ, տերտերի թուքը բերանում չորանում է եւ անմիջապես տակից դուրս է գալիս: Ասում է՝ ես այդպես չեմ ասել, ասել եմ՝ սովորիր, սովորիր հորդ պես, էշ մի մեծացիր: Հիմա ՔՊ-ինն է՝ հնարամտորեն տակից դուրս եկան: Ինչքան էլ ատեմ նախկիններին, բայց արդարությունը չեմ կարող կոծկել. այդ 4-ից ո՞ր մեկն է հիմար, որ 2 միլիոն ժողովուրդ ունեցողին հանի մինչեւ ատամները սրած Ալիեւի 20 միլիոնի եւ թուրքի 100 միլիոնի դեմ: Հոգնեցինք ստերից, խոսքերը բերանների մեջ շուռ տալուց, արդարանալուց: Թող ազնվություն ունենան, ժողովրդին ասեն, որ այս խաղաղությունը, ցորեն ու բենզին ներկրելը ձեռք են բերվել մեծ խոստումների գնով, եւ, այո, Նիկոլը պետք է մնա իշխանության, որ խոստացածները տա, որ այդ ահարկու պատերազմը չլինի: Ահա վերծանված տարբերակը, մի մոռացեք, որ արդեն 5 տարի է՝ Ալիեւը մեր հողի մեջ խրամատավորվել է, բունկերներ են սարքել ու լիքը զենք լցրել. եթե խաղաղություն է, ինչո՞ւ դուրս չի գալիս: Ի՞նչ սահմանազատում. եթե սահմանազատում էր, ինչո՞ւ Տավուշից սկսեցին: Նա ոչ միայն այսօրվա զավթած տարածքներն է ուզում, այլեւ որպես անկլավ՝ Տիգրանաշենը նույնպես, 300 հազար փախստականների վերադարձ: Ես միշտ դեմ եմ եղել նախկիններին. նախ, ժողովուրդը դրանց չի ընտրի, Նիկոլը լավ էլ գիտի, բա ինչո՞ւ է թողել, որ Քոչը ընտրապայքարի մեջ մտնի, որ նրանց ատելով՝ էլի իրեն ընտրեն: Ո՞վ է հիմար: Ես վաղուց եմ ասել, որ ամեն բան կբացահայտվի ընտրություններից հետո: Մեզ պետք է, որ նոր ուժեր գան իշխանության, այո, եթե Նիկոլը մնա, ստիպված է իր խոստացածները տալ, եթե չտա, պատերազմ կլինի: Սա է իրականությունը, հերիք է ժողովրդին խաբեն, 8 տարի նախկինների հետ համեմատվելով՝ թատրոն էին ցուցադրում: Նոր ուժեր պետք է գան իշխանության, որ Ալիեւի ախորժակը սանձեն, այլապես Ալիեւը թիզառթիզ խլելու է մեր հողը…

- Արցախցիներին Փաշինյանը բացահայտ անվանում է փախածներ:

- Դե, ինչպես միշտ, բերանից թռցնում է եւ երբ տեսնում է, որ ժողովուրդը չի ընդունում, իր խոսքից հրաժարվում է, ասելով՝ վերնախավին է վերաբերել, ովքեր հիմա գերության մեջ են. զավեշտ է: Իրականում՝ ի սկզբանե Փաշինյանը տեր չկանգնեց Արցախին՝ ասելով, որ իրեն Հայաստանի ժողովուրդն է ընտրել, այն դեպքում, երբ Սահմանադրությամբ, Հռչակագրով՝ Հայաստանն Արցախի անվտանգության երաշխավորն էր: Երբ 10 ամիս արցախցին շրջափակման մեջ էր, հենց ինքը պետք է բանակցեր Ալիեւի հետ եւ պահանջեր, որ արցախցին մնա իր հողում, թեկուզ ընդուներ Ադրբեջանի քաղաքացիություն, ինչպես Սովետի օրոք, տուն-տնավեր չլիներ, չթողներ իր սրբություններն ու գերեզմանները, արցախցին իր ծննդավայրն է կորցրել, այդ մարդկանց էլ պետք է ըմբռնումով հասկանանք ու նրանց վերքի վրա ավելորդ աղ չլցնենք. նրանք ոչ թե փախածներ են, այլ՝ բոբիկ դիվանագիտության զոհերը, սկսած 1994-ի բիշքեկյան զինադադարից, երբ Լեւոն Տեր-Պետրոսյանը մեր հաղթանակները գրեց սառույցին, նրան հաջորդեցին Քոչարյանն ու Սերժը, հերթը հասավ Փաշինյանին, ու վերջնական հայաթափվեց:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆՐԱՆՑ «ԲԻԶՆԵՍԸ» ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ Է, ՊԵՏՔ Է ԸՆԴՈՒՆԵԼ՝ ԲԱՎԱԿԱՆ «ՀԱՋՈՂ» ԲԻԶՆԵՍ Է

*Զրուցակիցս «Կիրովականյան կյանք» ռադիոհաղորդումների եւ «Գուգարք» թերթի նախկին խմբագիր, բանաստեղծ **Արամայիս Դուրինյանն** է:*

- Այսօր ամենաքննարկվող թեմաներից է Նիկոլ Փաշինյան-Վլադիմիր Պուտին հանդիպումը: Ի՞նչ հնարավոր հետեւանքներ եք տեսնում հակասությունների շարունակության պարագայում:

- Դա այն թեման է, որը երկար է լինելու հանրային ուշադրության կենտրոնում: Եվ բնական է, որովհետեւ խոսքը ոչ թե պարզապես հանդիպման, այլ մեր պետության ապագայի ուղղության մասին է: Տեսակետ կա, թե հանդիպման նախաձեռնողը հայկական կողմն է: Իմ գնահատմամբ՝ ավելի հավանական է, որ կազմակերպվել է ռուսական կողմի նախաձեռնությամբ՝ երկկողմ հարաբերություններում կուտակված հարցերի պարզաբանման նպատակով: Վերջին շրջանում հաճախ են հնչել կոշտ հայտարարություններ՝ ուղղված Ռուսաստանին, այդ թվում՝ մեղադրանքներ Արցախի հարցում, հիբրիդային պատերազմի մասին խոսույթ, նաեւ ակնարկներ՝ ԵԱՏՄ-ից եւ ՀԱՊԿ-ից դուրս գալու վերաբերյալ: Նման հայտարարությունները չեն կարող հետեւանքներ չունենալ: Ռուսական կողմը, իմ տպավորությամբ, բավականին հստակ ներկայացրեց իր դիրքորոշումները՝ պես դժվարությունների, այլ ճակատագրական ընտրության առաջ:

- Ի՞նչ նկատի ունեք՝ «վտանգավոր անորոշություն», «ճակատագրական ընտրություն» ասելով:

- Երբ ամեն օր թիրախավորվում է մեր ռազմավարական գործընկերը, երբ խոսվում է ԵԱՏՄ-ից եւ ՀԱՊԿ-ից դուրս գալու մասին, երբ հնչում են մեղադրանքներ «հիբրիդային պատերազմի» վերաբերյալ, պետք է հասկանալ՝ դա ուղղակի հռետորաբանություն չէ, «ընտրյալ» ուղի է: Եվ այդ ուղին մեր ազգի համար ունի ծանր գին: Եթե Հայաստանը դուրս գա ռուս-հայ տնտեսական եւ անվտանգային համակարգից, հետեւանքները լինելու են շատ կոնկրետ, ոչ թե տեսական. օդային հաղորդակցությունները կարող են դադարեցվել, տնտեսական կապերը խզվել կամ կտրուկ թուլանալ, արտահանումը ռուսական շուկա լուրջ հարված «կուտի», հարյուր հազարավոր աշխատողներ կկանգնեն սոցիալական խնդիրների առաջ: Մի՞թե սա սոսկ քաղաքական բանավեճ է եւ ոչ թե գոյաբանական հարց:

- Տնտեսական հետեւանքների մասին շատ է խոսվում, կարո՞ղ եք ավելի հստակեցնել:

- Այստեղ պետք էլ չէ գունազարդ «թղթերով» փաթեթավորել իրականությունը: Եթե գազի գինը, օրինակ, բարձրանա 3-3.5 անգամ, ինչպես արդեն տեղեկացվել է, դա նշանակում է՝ մարդիկ չեն կարողանա նույն «ջերմեռանդությամբ» ջեռուցել իրենց տները, էլեկտրաէներգիան կթանկանա նույն շղթայով, հացի գինը կարող է «երկինք» հասնել, ջերմոցային տնտեսությունները կփակվեն, տաքսին ու տրանսպորտը կդառնան շքեղություն: Այս ամենը կբերի մեկ բանի՝ զանգվածային աղքատացման: Դա գիտակցո՞ւմ ենք: Նրանք, ովքեր որոշումներ են կայացնում, այս ամենի իրական բեռը չեն կրելու: Մինչ ժողովուրդը հաշվարկում է՝ ինչպես վճարի ընդգծելով հնարավոր զարգացումների ռիսկերը: Սա ուղերձ էր ոչ միայն իշխանություններին, այլեւ՝ ողջ հայ հասարակությանը: Պետք է հստակ ասել՝ վարչապետի ոչ մի խոսք, ոչ մի քայլ պատահական չէ: Բայց նույնքան հստակ է, որ այդ քայլերի մեծ մասը չի բխել մեր ժողովրդի շահերից: Նրա յուրաքանչյուր հայտարարություն դառնում է սենսացիա, ցավոք՝ ոչ դրական իմաստով: Մենք գործ ունենք քաղաքականության հետ, որը հետեւողականորեն հեռացնում է երկիրն իր բնական դաշնակցային միջավայրից եւ տանում դեպի վտանգավոր անորոշություն: Այսօր արդեն ակնհայտ է՝ երկիրը կանգնած է ոչ թե պարզա-

կոմունալը, իշխանության ներկայացուցիչները միլիոնավոր դրամների աշխատավարձեր են ստանում, պարգեւավճարներ են բաժանում իրենց: Խոսվում է նորից միլիարդավոր դրամների պարգեւավճարների մասին: Նրանց համար գազի թանկացումը թվաբանական «գործողություն» է, ոչ թե ազգի գոյաբանական խնդիր: Նրանք նաեւ «գործարարներ» են, բայց ո՛չ շուկայական իմաստով: Նրանց «բիզնեսը» պետական բյուջեն է, եւ պետք է ընդունել՝ բավական «հաջող» բիզնես է. ո՞ւմ հայտնի չէ, թե 8 տարում ինչեր ձեռք բերեցին՝ պալատներ, հսկայական գույք, կուտակված հարստություն՝ բյուջեն «ողջ» լինի: Եվ բնական է հարցը՝ երբ ժողովուրդն աղքատանում է, իսկ իշխանությունը՝ հարստանում, ո՞ւմ շահերն են սպասարկվում:

- ՔՊ-ն դրանով չի բավարարվում՝ ամեն օր նրանց «կարկառուն» ներկայացուցիչները սենսացիոն հայտարարություններով են հանդես գալիս:

- Երեւի նկատի ունեք Ալեն Սիմոնյանի հայտարարությունը, թե Ադրբեջանի խաղաղության երաշխավորը Հայաստանն է, իսկ Հայաստանի անվտանգությանը՝ Ադրբեջանը: Սա պարզապես սխալ ձեւակերպում չէ, սա մտածողություն է: Եվ այդ մտածողությունը նույն հարթության վրա է այն մտքերի հետ, որոնք արդեն լսել ենք՝ «պարտությունը հաղթանակ է», «պարտությամբ ենք կառուցում պետություն» եւ այլն: Չկարծեք, թե դրանք պատահական խոսքեր են: Մենք գործ ունենք պետականության գոյության համար ծայրահեղ վտանգավոր աշխարհայացքի հետ: Նման ձեւակերպումները պահանջում են լուրջ պարզաբանում եւ հանրային քննարկում, քանի որ առնչվում են ազգային անվտանգության հիմնարար հարցերին: Այսօր առավել, քան երբեւէ, կարեւոր է զգոնությունը: Պետք է սառնասրտորեն գնահատել իրականությունը, հասկանալ հնարավոր ռիսկերը եւ առաջնորդվել ոչ թե հուզական, այլ՝ բանական ընտրությամբ: Արդյո՞ք մենք պատրաստ ենք ընդունել այն ուղին, որը մեզ առաջարկվում է, թե՞ կփորձենք ձեւավորել այլընտրանք՝ հիմնված ազգային շահի, արժանապատվության եւ երկարաժամկետ կայունության վրա: Այո, մեր պետությունը կանգնած է լուրջ մարտահրավերների առջեւ: Հանրային մթնոլորտում նկատվում են բաժանումներ, անվստահություն, վախի տարրեր, ակտիվանում են հարմարվողականությունը եւ իրավիճակային շահն առաջնահերթ համարող շրջանակները, որոնց համար ազգային արժեքները հաճախ երկրորդական են: Մեր առջեւ մի պարզ, բայց չափազանց ծանր հարց է դրված: Պատրաստ ենք շարունակել այս ուղին՝ իր բոլոր հետեւանքներով, թե՞ ունենք կամք՝ կանգ առնելու եւ վերագնահատելու: Եթե դա չանենք հիմա, հետո կարող է ուշ լինել: Այդ ժամանակ այլեւս հարց չենք տալու, այլ պարզապես արձանագրելու ենք, թե ինչ կորցրինք: Պատասխանն այս անգամ իսկապես վճռորոշ է լինելու:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԱՅՍ ՄԱՐԴՈՒՆ ՊԵՏՔ Է ԻԳՆՈՐ ԱՆԵԼ

«Հրապարակի» զրուցակիցը հոգեբան **Միհրդատ Մադաթյանն** է:

- Նիկոլ Փաշինյանի պահվածքը միշտ է եղել նյարդային, սակայն վերջին շրջանում ակնհայտ սրացումներ են նկատվում: Նա անդադար սկանդալների մեջ է հայտնվում, ակնհայտ վախեր ունի, տարօրինակ լայվեր է անում. «տղա ես՝ խոսիր», ««արհամարհել» բառը գրեք», «քարաքոսն ի՞նչ է», «ուժեղ տղա ես՝ էդ տեքստը կարդա»: Ինչպե՞ս կբնորոշեք Փաշինյանի հոգեվիճակը:

- Նիկոլ Փաշինյանը մշտապես եղել է թույլ տղա, հիմա փորձում է ուժեղ տղաներին ստորադասելով, ցույց տալ իր «ուժը»: Նրա ֆեյսբուքյան լայվը անհաջողակի մասին պատմող դասական օրինակ է: Այդ մարդը չի կարողանում իր արած գործերով, իր գաղափարներով ու քայլերով բարձրանալ, նրա բարձրանալու միակ ձեւը ուժեղներին ստորադասելն է: Ես շատ հավանում եմ Դոն Կիխոտին, նա ռոմանտիկ կերպար է, սակայն եկեք Նիկոլ Փաշինյանին համարենք մեր ժամանակների Դոն Կիխոտ, որը կռիվ է տալիս հողմաղացների հետ: Նա բոլորի հետ կռիվ ունի: Եթե կհիշեք՝ ամեն ինչ սկսվեց նրանից, որ նա իր քաղաքական հակառակորդներին բանավեճի էր կանչում, հիմա ամեն գնով իր մրցակիցներին փորձելու է բերել իր ստերի ու շոուների դաշտ.... այդ շարքին էր դասվում նաեւ Մոսկվայում Վլադիմիր Վլադիմիրովիչի հետ զրույցը՝ փորձեց Պուտինի մոտ իրեն ցույց տալ որպես ուժեղ տղա: Այսինքն՝ պարտված Փաշինյանը փորձում է ֆավորիտների վրա շողք գցել: Այս մարդուն պետք է իգնոր անել: Առաջին իգնորը նրան կաթողիկոսն է արել, ինչից հետո շարունակում են քաղաքական ուժերը՝ Ռոբերտ Քոչարյանը, Սամվել Կարապետյանը, Գագիկ Ծառուկյանը եւ այլք....

- Իսկ 18-ամյա դեռահասի նկատմամբ այս դաժան վերաբերմունքն ինչի՞ համար է: Իմաստը ո՞րն է:

- Սա փոքրոգության, քինախնդրության վառ դրսեւորում է: Հայ ժողովուրդը ի վերջո պետք է հասկանա, թե իր ձայնն ում է տվել 2018-ին՝ տվել է մի փոքրոգի, քինախնդիր, 18-ամյա դեռահասից վրեժ լուծող մարդու: Երկրի ղեկավարները, իրական լիդերները սովորաբար լինում են ներողամիտ: 18-ամյա երեխան չի կարող երկրի ղեկավարի համար դառնալ թիրախ: Ստեփանակերտում եւ Շուշիում քոչարի պարելով, «Արցախը Հայաստան է, եւ վերջ» հայտարարելով, հանձնեց մի ամբողջ պետություն: Այս վարքագիծը հուշում է մի բան՝ նա հոգեբանական առումով դեռահասության փուլում է գտնվում: Ընդ որում՝ վատ, սպեկուլյատիվ դեռահասության փուլում: Բազմաթիվ չհաղթահարված բարդույթներ ունի, ինֆանտիլ վարքագիծ, ու լավ կլինի, որ վերջինիս հետ սկսեն աշխատել հոգեբաններ: Նիկոլ Փաշինյանն առաջնորդվում է այն սկզբունքով, որ եկեք ուժեղներին խփենք, որ մենք ավելի ուժեղ երեւանք: Նա կարծում է, որ մարդկանց նվաստացնելով ինքը բարձրանում է, բայց իրականում հակառակն է՝ այդ վարքագծի պատճառով իր վարկանիշն օրեցօր նվազում է:

- Ոմանք կարծում են, որ Փաշինյանի մոտ սրացումներ առաջացան ամուսնալուծությունից հետո:

- Ես չեմ հավատում եւ դրա համար հիմքեր ունեմ: Այս մարդկանցից 8 տարիների ընթացքում չեմ լսել գեթ մեկ ճիշտ խոսք, փոխարենը տեսել եմ անդադար իրար հաջորդող շոուներ, անգամ երեխաներին չեն խնայել իրենց շոուների համար, ես ուղղակի չեմ հավատում նրանց ամուսնալուծությանը: Այն, ըստ իս, ակտ է, պլանավորված շոու, ինչն ունենալու է այլ արարներ: Մայիսի կեսերից ի հայտ կգա շոուի հերթական արարը, հունիսին կհասնի իր տրամաբանական ավարտին՝ հարսի շորով եւ պսակադրությամբ: Ես չգիտեմ գեթ մեկ կնոջ, որը լինի ամուսնալուծված եւ այդքան աջակցի իր նախկին ամուսնուն:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՏՑՐԵԼ ԵՍ ՃԱՀՃԻ ՄԵՋ, ԱՄՓՈՓԵԼ ՄԻ ԾՌՏԻ ՔԱՐՏԵԶՈՒՄ

Երբ դու ռուսական հողերը հետ բերող Պուտինի առաջ նստում ես քո ծռտի քարտեզով ու մի բան էլ հայտարարում, որ Հայաստանն ու Ադրբեջանը միմյանց տարածքային ամբողջականությունը ճանաչել են Ալմաթիի հռչակագրով ու ԽՍՀՄ փլուզման պահի քարտեզներով, Պուտինը սկսում է մտածել, որ դու խառնել ես այցիդ աշխարհագրությունը եւ, օրինակ, Կիեւ գնալու փոխարեն եկել ես Մոսկվա: Գնայիր, Զելենսկուն բացատրեիր, որ պետք է վերականգնվեն ԽՍՀՄ փլուզման պահի քարտեզները՝ Պուտինը կիասկանար քեզ, կմտածեր, որ դու եւ Զելենսկին մի տնից չեք, բայց մի օրի եք՝ պարտվել եք, տարածքներ կորցրել, հազարավոր զոհեր տվել, ու այս ամենի պատասխանատվությունը ձեր ուսերին է: Ես նույնիսկ չեմ էլ բացառում, որ Պուտինի հետ խոսակցությունը թարս գնաց հենց այդ հիմար քարտեզի պատճառով: Ոնց որ Պուտինին Մոսկվայում մեղադրես Ղրիմի, Դոնբասի, Լուգանսկի, Աբխազիայի, Հարավային Օսիայի համար: Լավ, դու քաղաքագիտությունից ինչքա՜ն ես հեռու: Վրաստանն էլ վարչապետ ունի... Իսկի տեսե՞լ ես, որ նա Վրաստանի «ծռտի» քարտեզ կպցնի դոշին ու գնա «ստեղ-ընդեղ», առանց հասկանալու, թե ում դուր կգա կամ ում դուր չի գա դա: Մարդը հայտարարել է, որ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի վերադարձի համար արյուն չեն թափելու՝ փորձելու են դա անել խաղաղ, բանակցությունների ճանապարհով: Ասել է թե՝ չեն հրաժարվել իրենց հողերից եւ, միեւնույն ժամանակ, դրանք այլ պետության տարածքային ամբողջականության մեջ չեն դիտարկում: Դրա համար էլ Վրաստանի վարչապետին հարգում են թե՛ Մոսկվայում, թե՛ Կիեւում, թե՛ Վաշինգտոնում, թե՛ Բրյուսելում, թե՛ Բաքվում, թե՛ Անկարայում... Ամենուր: Եղբայր, մեզ շան տեղ չեն դնում քո հիմար քարտեզի, քո վարած արտաքին քաղաքականության, կապիտուլյանտի քո էության, քո ապազգայնության, վերջապես՝ քո անձի պատճառով: Գնա, էլ մի սպասիր ընտրություններին: Քո պատճառով ՀՀ քաղաքացին այլեւս կանգնած է սեփական իշխանությունը ձեւավորելու դժվարության առաջ՝ կամ պիտի Արեւմուտքի սիրեցյալին ընտրի, կամ Պուտինի: Քաղաքական դաշտը քո փոքրիկ խմբակով խառնել ես իրար, քո սուտ խաղաղությամբ, որ ավելին չէ, քան Հայաստանի վերջնական կործանումը, տիրել ես բոլոր բութ ուղեղներին ու նրանցով գնում ես ընտրության: Վերջ տուր այս խայտառակությանը, դրսում 21-րդ դարն է, պետություններն առաջ են քայլում... Դու՝ ծախողվածդ, Հայաստանը մտցրել ես ճահճի մեջ, ամփոփել մի ծռտի քարտեզում, որ ի՞նչ անես:

Դուք ձեզ մի պահ դրեք Պուտինի կամ Թրամփի տեղն ու ասեք՝ ի՞նչ կանեիք, եթե որեւէ օկուպացված երկրի ղեկավար նստեր ձեր առջեւ, մեղադրանքներ կարդար ձեր գլխին ու օկուպանտ երկրին հայտարարեր իր անվտանգության երաշխավոր: Այո, մի պարզ հարց կտայիք՝ հո դու է՞շ չես, արա, էս ինչե՞ր ես խոսում: Եթե չգիտեք, թե անվտանգության երաշխավորն ինչ է կամ ով, գոնե մի անշառ երկրի անուն տայիք, ասեիք՝ Հոնդուրասն է Հայաստանի անվտանգության երաշխավորը: Պուտինն ու Թրամփը միանգամից կիասկանային, որ դուք գժանոցի ապրանք եք: Բայց այսպե՞ս... Ադրբեջանն է Հայաստանի անվտանգության երաշխավորը: Արա, այ ավլածներ, գերտերությունները մարդ են ման գալիս որ երաշխավոր կանգնեն, դուք թրքոտ Ադրբեջանի՞ն եք երաշխավոր դարձնում... Թե բա՝ անկախ ենք, ինչ ուզենանք, կասենք, ինչ ուզենանք, կանենք: Բայց հենց Պուտինը գազի թանկացումից է խոսում, տնով-տեղով փախնում, մահճակալների տակ եք մտնում: Սա չի՞ ձեր անկախության ու ինքնիշխանության նշաձողը:

Անվտանգության երաշխավորի մի լավ կողմն էլ այն է, որ դժվարությամբ է հրաժարվում իր հովանավորյալից, անընդհատ ժամանակ է ձգում, համոզում է, երբեմն էլ խիստ է խոսում հետը, որ սա իր մոտից չփախչի ու գլխին մի փորձանք չբերի: Պուտինը, օրինակ, մեռավ Նիկոլի գլխին ավետարան կարդալով՝ մենք լավ ու զարգացող հարաբերություններ ունենք, արտահանում, ներմուծում, մենք ե՞րբ ենք ձեր հավին քշա ասել... Նիկոլն այդ ամենին գլխով էր անում, մեկ էլ դիվոտում է, երբ Պուտինը խոսում է Պրահայում իր հայտարարության մասին: Պուտինին հակադարձում է, թե բա՝ դուք եք Ղարաբաղը ճանաչել Ադրբեջանի կազմում: Լավ, էլի, չկարողացա՞ր քաղաքագիտորեն մոտենալ այդ հարցին: Էդ նույն էշությունը, որ ամեն անգամ տալիս ես հայ ժողովրդի ճակատին՝ փախել եք, ճողոպրել եք, դիզերտիր եք, չեք կռվել, մի՞թե կարելի էր շպրտել այն մարդու դեմքին, որ մինչեւ ճակատագրական նոյեմբերի 9-ը եւ Շուշիի հանձնումը, առնվազն երեք անգամ քեզ առաջարկել է կանգնեցնել պատերազմն ու խուսափել հազարավոր զոհերից: Եվ կամ՝ դու չգիտե՞ս, թե ինչի շնորհիվ ես 21 թվին մնացել իշխանության: Փորփրիր հիշողությունդ, մեկ անգամ էլ կարդա Արցախին ու արցախցիներին վերաբերող խոստումներդ եւ դրանք համեմատիր այդ հարցերում Ռուսաստանի ավանդական դիրքորոշման հետ:

Բայց Մոսկվայից գանք Հայաստան: Դուք ասում եք՝ 21 թվին ժողովուրդն է ձեզ ընտրել: Չեմ հավատում, բայց ընդունենք, որ մեր ժողովուրդը սխալվեց: Իսկ դուք ընդունո՞ւմ եք, որ ժողովուրդը կարող է նաեւ ձեզ չընտրել: Ես ի՞նչ իմանամ, 5 տարի է անցել, իսկ այդ 5 տարում հազար ու մի զուլում եք բերել ժողովրդի գլխին: Հանկարծ վերցնի ու ձեզ չընտրի: Կընդունե՞ք: Ասեմ՝ իմանաք... Դուք ժողովրդին դրել եք մի վիճակի մեջ, որ ձեզ չընտրի: Հայտնի առած կա, ասում է՝ խեղդվողի փրկությունը առաջին հերթին խեղդվողի սուրբ գործն է: Ի՞նչ պետք է անի նա... Օգնություն կանչի, ձեռքերն ու ոտքերը թափահարի, հենց գլուխը հայտնվի ջրի երեսին՝ օդ շնչի, մի խոսքով՝ պայքարի: Մեր ժողովուրդն այդ վիճակում է հիմա: Ավելին ասեմ՝ 21-րդ դարում մենք միակն ենք, որ մեր իշխանությունների վարած քաղաքականության պատճառով հայտնվել ենք այդ վիճակում: Ուկրաինացիների վիճակն ավելի լավ է այս իմաստով: Նրանք գոնե լողալ գիտեն, էշ-էշ հայտարարություններ չեն անում եւ գիտեն ումից անվտանգության երաշխիքներ պահանջել: Մեր վիճակն օրհասական է՝ ո՛չ լողալ գիտենք, ո՛չ կողմնորոշում ունենք, ո՛չ էլ կողմնորոշվելու ունակություն: Մնում է մի բան՝ ինքնապահպանության բնազդը: Հենց այդ բնազդով էլ, առաջին անգամ մեր պատմության մեջ, մենք պետք է գնանք ընտրությունների: Տեսնենք՝ ինչ կլինի:

Էդիկ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan
@hraparak.am

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 8.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ, ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՈՒ ՄԱՐՏՈՒՆԱԿ ԲԱՆԱԿՈՎ Է

Խաղաղության այն տեսլականը, որով Նիկոլիզմը փորձում է մոլորեցնել հայաստանյան հասարակությանը, կապիտուլյացիայի անխուսափելիությունն ընդունող խաղաղության տեսլական լինելուց բացի, նաեւ ադրբեջանական սվիններով իշխանությունը չզիջող տեսլական է: «Եթե մենք չլինենք իշխանություն, կլինի պատերազմ», «Տեր կանգնենք մեր խաղաղությանը». սրանք Նիկոլիզմի այն թեզերն ու կարգախոսներն են, որոնք դաշտ են նետվում հասարակությանը մոլորեցնելու, խաղաղության մասին հասարակության ունեցած պատկերացումները խճճելու համար:

Հակառակ դեպքում դժվար է պատկերացնել մի իշխանություն, որն ութ տարի պետության ղեկին լինելով՝ չի հասկացել, որ իսկական խաղաղությունը, բացի սեփական ժողովրդի ընտրությունից, ուրիշ «տեր կանգնող» չի ունենում, որ իսկական խաղաղությունը թշնամու ողորմածությանը «հանձնված կամ չհանձնված» իշխանություն ունենալուց կախված չի լինում:

Առավել եւս, դժվար է պատկերացնել մի իշխանություն, որն ութ տարի իշխանության լինելով՝ չի հասկանում, որ միակ բանը, ինչը թուլացնում է իսկական խաղաղությունը, թշնամու ողորմածությանը չհանձնված իշխանություն ունենալը չէ: Միակ բանը, որը թուլացնում է իսկական խաղաղությունը, երկրի ինքնապաշտպանվելու կարողությունն ավելացնել չկարողացող իշխանությունն է:

Այս առումով, մենք պետք է հասկանանք, որ խաղաղության մասին խաբկանքն սկսվում է այնտեղից, երբ խոսվում է ոչ թե խաղաղության համար երկրի տնտեսական դիմադրողականությունը մեծացնելու մասին, ոչ թե խաղաղության համար երկրի բանակը բարեփոխելուց, այլ խաղաղության համար մեր կրակելու ժամանակը չկրակելու ժամանակ դարձնելուց, առավել եւս, խաղաղության ու թշնամու ողորմածության միջեւ հավասարության նշան դնելուց:

Երբ վերջացել էր արցախյան առաջին պատերազմը, երբ եկել էր մեր կրակելու ժամանակը, մենք՝ խաղաղության մասին մեր խեղված պատկերացումներով մտածեցինք, թե եթե մենք մեր կրակելու ժամանակը ոչ թե կրակելով Ադրբեջանի զարգացմանը խանգարելուց, այլ չկրակելով Ադրբեջանին խաղաղասեր դարձնելու վրա ծախսենք, ապա կգա մի օր, եւ Ադրբեջանը կհարմարվի պատերազմով ձեւավորած մեր իրողության հետ: Մտածեցինք, որ այդպես կլինի, բայց այդպես չեղավ:

Միակ բանը, որն այս առումով մենք ունեցանք, այն եղավ, որ Ռոբերտ Քոչարյանն այսօր կարողանում է ասել, որ իր նախագահության ժամանակն ամենախաղաղ ժամանակն էր, եւ կարողանում է չասել, որ այն խաղաղ էր, որովհետեւ այն ամենախաղաղ ժամանակը լինելուց բացի, նաեւ չկրակելու վրա ծախսված մեր կրակելու ժամանակն էր:

Նույնն է նաեւ այսօր, ուղղակի, խաղաղության մասին մեր պատկերացումների խեղվածությունը հիմա արդեն ուրիշ կողմից է գործում: Հիմա էլ, չգիտես թե ինչու, բայց մեզ թվում է, թե եթե այն ժամանակ մենք մեր կրակելու ժամանակը չկրակելու վրա ծախսելով չենք կարողացել Ադրբեջանին խաղաղասեր դարձնել, ապա դրան պետք է հասնենք նրա ողորմածությանը հանձնվելով:

Բայց այդպես չի լինում: Իսկական խաղաղություն չես կառուցի ո՛չ պատերազմով վաստակած կրակելու քո իրավունքը չկրակելու պարտականություն դարձնելով, ո՛չ էլ թշնամու ողորմածությանը հանձնվելով: Իսկական խաղաղությունը արդյունավետ տնտեսությամբ, կարմիր գծեր ունեցող դիվանագիտությամբ ու մարտունակ բանակ ունենալով են կառուցում:

Գալուստ
ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am